2954

264
П-28

Պ 28

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ

ՀԱՒԱՔԵԱԼ 'Ի ԺԱՄԱՌՐՈՑ ԵՒ 'Ի ՄԱՏԵՆԻՑ ՍՐՐՈՑ ՀԱՐՑ ԸՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՆԻՑ ԱՐՔՐՈՑ

2001

'Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՈՒՐԲ ՎԱՆԱՅՆ

1883

ՊՏՈ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԻԼՈՐԳԻՈՍ Դ Ի ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ

ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Բ. ՍՐԲԱԶԱՆ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՐԲՈՑ ՎԱՆԱՑ

93926-42

2072-2002

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԱԶԴ

Լրագրողութիւնք սրբոյ պատարագի զոր վասն դիւրակիր լինելոյ մեծաց և փոքունց Պարոն Պողոս Վիլենեան Կոստանդնուպոլսեցին յիւր Արծիւ անուն Տպարանի տըպեալ էր յամին 1848 'ի Եալկաթա. արդարև մեծ դիւրութիւն և օգուտ ընծայեաց մանկանց սուրբ եկեղեցւոյ։ Լրաբ որ այժմ ըսպառեալ գոլով և գրեթէ անգտանելի՝ հոգաբարձութիւն Տպարանի Ամենափրկչեան Ս. Վանացս Հրամանաւ և հաւանութեամբ Նորին Բ. Սրբազնութեան Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Հայրախնամ Առաջնորդի մերոյ հարկ անհրաժեշտ համարեցաւ տպագրել. և ահա օգնականութեամբն Աստուծոյ յաւարտ հանեալ զգործն փոքրիկ, իմն ծառայութիւն առնէ 'ի փառս Աստուծոյ և 'ի պայծառութիւն ուխտի մանկանց եկեղեցւոյն։

ՊԱՏԱՐԱԳ

ԱՒԱՆԴՈՒԹԻՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ

ԱՂՕԹՔ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Օրհնեալ Տէր մեր Յիսուսովհրիստոս. Ամէն։

Հա՛յր մեր որ յերկինս ես. սուրբ է անուն քո։ Լուսաւորեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Օհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ 'ի փոր-

ՁՈՒԹԻՒՆ, այլ փրկեա զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն,

ՄԱՂԹԱՆՔ

Զ Պաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն Աստուած, 'ի հաճոյս բարերար կամաց իւրոց. մեր մեղացն և բազում յանցանացն թողութիւն շնորհեսցէ. 'ի չարեաց փրկեսցէ. 'ի մեղաց պահեսցէ. և 'ի նմա փառք յաւիտեանս. Ամէն։

ՀԱՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԻ
ՅՈՐԹԱՄ
ԶԳԵՆՈՒ ՊԱՏԱՐԱԳԻԶՆ

Դ. Խորհուրդ խորին անհաս անըսկիզբն. որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. 'ի յառաջաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասսս հրեղինաց։ Ընձառաջարաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական. և նազելի փառօք զգեստաւորեցեր. 'ի դրախտն ադենի տեղի բերկրանաց։

Զարչարանօք քո սուրբ միածնին. նորոգեցան արարածք ամենայն. և' վերըստին մարդն անմահացաւ. զարդարեալ 'ի զգեստ անկողոպտելի։ Ընձրեւածին բաժակ հրահոսան. որ հեղեր յառաքեալսն 'ի սուրբ վերնատանն. հեղ և 'ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած. ընդ պատմուճանի զքո զիմաստութիւն։ Տան քում վայելէ սրբութիւն. որ զգեցար ըզվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ. պատեա ըզմէջս մեր ճշմարտութեամբ։ Որ զարարչագործ բազուկս քո. տարածեցեր ընդդէմ աստեղաց. հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ. համբարձմամբ ձեռաց առքեզ միջնորդիլ։ Խիւսմամբ թագ 'ի գլուխ. պատեսցես ըզմիտս և ըզգայարանս. խաչանիշ ուրարամբ ըստ Ահարոնի. ծաղկեալ յոսկեթել 'ի զարդ խորանի։ Թամից բոլորից. տիրապէս Աստուածպետական. նափորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր. քում սուրբ խորհրդոյդ լինիլ սպասաւոր։ Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. և' զերկրպագուս անուանդ քում պահեա 'ի խաղաղութեան։

Ք. Ուսացիս սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով Տէր։

Ս. Լատ արա ինձ Տէր՝ զի ես յամբը-

ծութեան իմում գնացի. 'ի Տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ։

Փորձեա՛ զիս Տէր և քննեա՛ զիս, փորձեա՛ զերիկամունս իմ և զսիրտ իմ։

Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց, և հաճոյ եղէց ճշմարտութեան քումբ։

Մ'ի նստայց ես յամբոխս նանրաց, և ընդ անօրէնս ես ոչ մտից։

Ատեցի ես զժողովս չարաց, և ընդ ամբարիշտս ես ոչ նստայց։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ, և շուրջ եղէց զսեղանով քով Տէր։

Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և պատմել զամենայն սքանչելիս քո։

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Մ'ի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, և մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ։

Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են, և աջ նոցա լի է կաշառօք։

Ես յամբծութեան իմում գնացի, փրկեա՛ զիս Տէր և ողորմեա՛ ինձ։

Ոտն իմ կացցէ յուղղութեան,

Յ|ՐԿԵՂԵՑԻՍ մեծս օրհնեցից զքեզ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ք. Լու վասն սրբուհւոյ Աստուածածնին՝

Ս. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Այմենակալ Տէր Աստուած մեր. կեցո՛ և ողորմեա՛։

Ք. Ընկալ Տէր զաղաչանս մեր բարե՛։

Լ՝ ապ ասէ։ Խոստովանիմ առաջի Աստուծոյ, և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի ամենայն սրբոց, և առաջի ձեր հարք և եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ։ Զանգի մեղայ խորհրդով, բանիւ, և գործով, և ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ։ Մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն։

Ե՝ Ռէյնակայ Քահանայն ասէ։ Ողորմեսցի՛ քեզ Աստուած հզօրն՝ և թողութիւն շնորհեսցէ՛ ամենայն յանցանաց քոց, անցելոյն և այժմուս և յառաջակայէն փրկեսցէ՛. և հաստատեսցէ՛ յամենայն գործս բարիս. և հանգուսցէ՛ զքեզ 'ի հանդերձեալ կեանսն. Ամէն։

Ե՝ Ինդն ասէ։ Ազատեսցէ՛ և զձեզ մարդասէրն Աստուած, և թողցէ՛ զամենայն յանցանս ձեր. տացէ՛ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուղղեսցէ՛ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն,

հզօրն և ողորմածն. և նմա փառք յաւիտեանս. Ամէն :

Դ. Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ Գառին Աստուծոյ :

Ք. Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառին Աստուծոյ :

Դ. Ողողակեցէք առ Տէր ամենայն երկիր ծառայեցէք Տեառն ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանիրուք զի նա է Տէր Աստուած մեր :

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա :

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ 'ի յարկս նորա :

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա :

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչև յազգէ ճշմարտութիւն նորա :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե":

Ս. Սուրբ Եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ընդունակաւ Տէր Աստուած մեր. կեցո՛ և ողորմեա՛ :

Ք. Ի մէջ տաճարիս և առաջի Աստուած.

ընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և": Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ :

Ս. Դատ արա ինձ Աստուա՛ծ, և իրա՛ւ արա ինձ 'ի դատաստանի իմում :

Յաղգէ որ ո՛չ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս :

Դու Աստուա՛ծ հզօրիչ իմ ես՝ ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ :

Ուղարկեա՛ Տէ՛ր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո :

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ :

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուա՛ծ Աստուած իմ :

Ուրդ՝ ընդէ՞ր տրտում ես ա՛նձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուա՛ծ է :

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Ս. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն : Օրհնեսցուք զամենակալն Աստուած զհայր Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջ փառաբանութեան և երգել զերգս

հոգևորս։ Յմենակալ Տէր Աստուած մեր. կեցո՛ և ողորմեա՛։

Ք. Ի յարկի սրբութեան՝ և 'ի տեղւոջ փառաբանութեան"։

Եւ ապա հգէն վերագոյրն, և Դպիրքն եղանակեն Մեղեդի՝ ըստ պարշաձի ասուր,

ՄԵՂԵԴԻՔ ԵՒ ՏԱՂՔ

ԸՍՏ ՊԱՏՐԱՃԻ ԱՒՈՒՐ

ԱՒԵՏԵԱՑ

Բարբառ ուրախութեան ձայնիւ. հրկնեա՛. Գաբրիէլ գոչէր Սրբուհւոյն։ Յո՛ քեզ առաքիմ մաքուր. հրկնեա՛։ պատրաստեալ տեղի Տէրունւոյն։

ԾՆՆԴԵԱՆ

Նոր ծաղիկ այսօր բըղխէ յարմատոյն

Յեսսեայ։ Յու որդի Դաւթի ծնանի զՈրդին Աստուծոյ։

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋԻ

ՎՀՐԻՍՏՈՍ փառաց թագաւորն. այսօր եկեալ յընծայումն։ Կատարելով նա՛ զօրէնս. քառանօրեայ գալըստեամբն։

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Ըստ Եբրայեցւոց մանկունքն. զերգ ըզքրովբէիցն առեալ. հեթանոսական դասուց. տօնակից վեհիցն եղեալ։

ՅԱՐՈՒԹԵԱՆ

Յս ձայն զառիւծուն ասեմ. որ գոչէր 'ի քառաթևին։ Ի քառաթևին գոչէր. հրկնեա՛ ձայն առնէր 'ի սանդարամետան. հրկնեա՛։

ՆՈՐ ԵՒՐԱԵԷԻ

Այսօր նոր արև հարեալ 'ի նորահրաշ արեգակնէ. հրկնեա՛։ Այսօր նոր շուշան ծաղկեալ. 'ի նորատունկ բուրաստանէն։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այսօր անդրանիկ հօր միածին Որդին. յերկինս սըլանայ Ադամային կերպիւ։ Նըւագ ներբողից եղանակեն այսօր. հոյլք հոգեղինաց երկնաւորացն խըմբից։

ՀՈԳԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Ղըւագեմք Հոգւոյն նըւագս վայելուչս։ Վայելուչս բանիւ զարարչութիւնն նախ ասեմք։

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Գոհար վարդըն վառ առեալ. կրկնէ։ Ի վերից վարսիցն արփենից. կրկնէ։ Ի-վեր ի վերայ վարսիցն։ պըղպըջէր ծաղիկ ծովային. կրկնէ։

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ. բերեալ զբարեբերն պըսակ յաղթօղ կուսին։ Այսօր կոչելով առ բոլորիցն Տէրն. զտաճար բարձրելոյն և զբնակարան Հոգւոյն։

ԽՍԿԶԻ

Յաչն ի նախնումն. երևեցաւ ծաղկեալ ի դրախտն Աստուածատունկ. մըխիթարիչ եղեալ Սեթաւ նախագուշակ Հօրն Ադամայ. մեք ի յայն փայտն եմք յուսացեալ. զոր Տէր Յիսուս երևեցաւ և խոնարհեալ երկրըպագեմք Աստուած. ընկալ սուրբ նշանիս։

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Գովեստ երկրանաց. քաղցրաձայնեալ երգեմք ձեզ հրեշտակապետք. և հրշտակաց գումարք։

ԱՌԱՔԵԼՈՅ

Արեգակն արդար որ ի հօրէ ծագեալ. զառաքեալսն քո անշառ շնորհօք լըցեալ։ Որոհ լուսոյ ցուցեալ Հայաստանեայց ազանց. մեծըն Թադէոս Բարդուղիմեաւ փայլեալ։

ՄԱՐԳԱՐԷԻՑ

Աստուածային խորոցն անշառ. խորհըրդ-

զածուք սուրբ մարգարէք. քանիւ պատմողք զապագայիցն. յառաջագոյն զեղեալութիւն։

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Ի հանդէս տօնի. քո բախացեալ ցընծամք. հայր և վարդապետ սուրբ հայրապետ Պետրոս։

ԵԿԵՂԵՑԻՈՅ

Լուսաւորչի կաթուղիկէ 'ի Հայաստան. այսօր զմանկունսըս ժողովեալ իւր համաձայն։

Ի-ոկ յորժամ Եպիսկոպոսն լինի Պապարգէնն գրիգոր ասեն ԶԸՆՏՐԵԱԼՆ և Եպիսկոպոսն 'ի ծառայս անչեալ ընդեառնս 'ի ծածուկ զնարէն (Ամենալ Էրբերբ ԼԵ) և ապ գարշեալ զնրգոյրն երգեն ԶՄԵՂԵԴԻՆ։

Ընտրեալըդ յԱստուծոյ. ով երջանիկ սուրբ քահանայ. Ելմանեալ Ահարոնէի. և Մովսիսի մարգարէին։ Ընդամ որ զգեստուցն էր յօրինող. զոր Ահարոնն միշտ ըզգենոյր։ Յօրինէր ըզպատմուճանն. զոր 'ի չորից կազմեալ նիւթոց։ Ի կարմրոյ 'ի կապուտոյ 'ի բեհեզոյ 'ի ծիրանոյ։ Թոռել զթելն յօրինէր. կարդն առաջին էր կարկեհան։ Ի օծումն դրապանին. շուրջանակի բոլորաշէն։ Ի յընթացս գարշապարին. հընչէր երկիր ցընծայր խորանն։ Ընդ 'ինոյն նըմանութեան. ՎԱՐԻՍՏՈՍ ըզմեր տէրս յօրինէ։

Յորժամ մըտցես 'ի սուրբ խորանն. անդ յիշեսցես զմեր նընջեցեալսն։ Յորժամ առնես ըզպատարագս. յիշեա և զիս ըզբաղմամեղս։ Զի և մեզ ողորմեսցի. 'ի միւսանգամ իւր գալըստեանն։ Զորըն փառք որդւոյն պատիւ. և սուրբ Հոգւոյն այժմ յաւիտեան։ Յաւիտեանս յաւիտենից. ՎԱՐԻՍՏՈՍ օրհնեալ 'ի համայնից։

ՀԱՐԱԿԱՆ

ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ

Դ. Յայս յարկ նուիրանաց ուխտի տեառըն տաճարիս. ժողովեալքս աստանօր 'ի խորհուրդ պաշտման պաղատանաց առաջակայ սուրբ պատարագիս. խընկօք անուշիւ

խումբ ուռեալ պարեմք 'ի վերնայարկ սրա-
հըս խորանիս. ուղղութեամբ ընկալ զա-
ղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ
խընկոց տաշխից և կինամոնաց. և ըզմա-
տուցօղըս պահեա սրբութեամբ միշտ և
հանապազ քեզ սպասաւորել. բարեխօսու-
թեամբ մեր քո և կուսի. ընկալ զաղաչանս
քոց պաշտօնէիցս :

Որ գերազոյն քան զերկինըս պայծառա-
ցուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քո ՎԻՐԻՍ-
ՏՈՍ, և ըստ երկնայնոցըն կարգեցեր 'ի սմա
զդասս առաքելոց և մարգարէից սուրբ
վարդապետաց. այսօր ժողովեալ դասք քա-
հանայից սարկաւագաց դրպրաց և գղերի-
կոսաց. խունկ մատուցանեմք ուռաջի քո Տէր
յօրինակ ըստ հընուամբն Զաքարիայ. ընկալ
ուռ 'ի մէնջ ըզխընկանուէր մաղթանս.
որպէս զպատարագն Աբելի զՆոյի և զԱբ-
րահամու բարեխօսութեամբ վերին քո զօ-
ւրացդ. միշտ անշարժ պահեա զաթոռ Հայ-
կազնեայս :

Խընդա՛ յոյժ դուստրը լուսոյ մայր սուրբ
կաթուղիկէ մանկամք քո Սիոնի. զարդա-
ւրեալ պլ՛ճնեա հարսըն պանծալի երկնա-
նըման լուսաշեմ խորան. զի օծեալն Աստ-
ուած էնն 'ի յէ՛ն անծախապէս 'ի քեզ
միշտ պատարագի. Հօր 'ի հաշտութիւն

մեզ 'ի քաւութիւն բաշխէ՝ զմարմին և զա-
րիւն իւր սուրբ. վասն իւր կատարման սուրբ
տնօրէնութեան. շնորհէ զթողութիւն կանգ-
նողի տաճարիս :

Օգնականն կոյսըն Մարիամ Աստուա-
ծածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի
տրուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ
ուրախարար. տուք օրհնութիւնս նը՛մա
հոգևոր երգով.

Ս. Օրհնեա Տէր :
Ք. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և":

ԺԱՄԱՄՈՒՏՔ

ԸՍՏ ՊԱՏՐԱՃԻ ԱՒՈՒՐ

ՊԱՀՈՑ

ՐՀ. }
ԳՀ. } Որ 'ի Հօրէ առաքեցար փրկիչ՝ և
ԵՀ. } մարմնացար 'ի սրբոյ կուսէն. որ վասն
մեր 'ի յերկնից իջեր և լուսաւո-
ւրեցեր զտիեզերս : Ո՛խաղաղութիւն քո
տուր մեզ Տէր՝ որ խաղաղութեանց ես թա-
գաւոր. զխաղաղութիւն և զողորմութիւն՝
որ յամենայնի ես կարող մարդասէր :

ԴԸ. Որ ըստ ամենայն միտս անցանիս։
ՈՒՐ. Զխաղաղութիւն քո Աստուած տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչիմք։

ԵՒՐ. Մի՛ածին Որդի և Բանդ Աստուած և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ 'ի սրբուհւոյ Աստուածածնէն և 'ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար ՎԱՐԻՍՏՈՍ Աստուած մեր. մահուամբ զմահ կոխեցեր. մինդ 'ի սրբոյ երրորդութենէն՝ փառաւորակից ընդ Հօր և սրբոյ Հոգւոյն՝ կեցո զմեզ։

ԾՆՆԴԵԱՆ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ընդ ցոցակի Տնօցոցին։

Աստուածածին անհարնանցեալ՝ զիրանն անսկիզբն յղացար և զԱստուածն անիմանալի ծնար. զանպարագրելին 'ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց։

Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց. քանզի՝

ուր փերուզբէքն բազմաչեայք և աթոռք հրանիւթք և վեցթևեան Սերովբէքն հայիլ ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանապականումն 'ի յարգանդի քումմ որպէս աղախին զՏէր. և ծնար որպէս զմարդ զԱստուածն քոլորից զմարմնացեալն առ 'ի քէն պանձառ զիրանն 'ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց։

Աղաչիմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին՝ բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ և սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ, որ զամենայն գոյութեանց ստեղծիչն յղացեալ ծնար անձառապէս. մարմնացելոյն առ 'ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր։

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՔԻ

Ներուն՝ այսօր Սիմէոնն՝ Հոգւոյն գայր 'ի տաճարն՝ երևելով փերուզբէիցն վեհագոյն, զի որոց թևօքն սաւառնեալ ոչ իշխէին հայիլ 'ի յահեղ փառացն, սա 'ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս և գգուէ որպէս զմանուկ. և աղերսելով հայցէր արձակիլ 'ի խաղաղութիւն։

Անսկզբնական Բանդ Աստուած՝ 'ի վերջին աւուրս յանձն առեր լինիլ մարդ 'ի կու-

սէն. և արարիչդ յաւիտենից՝ փակեցար ընդ ժամանակաւ. սուրբ Տէր սրբութեանց և անկարօտ մաքրութեանց. եկիր 'ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն: Օրհնեալ Սիմէոնի զանպարագրելիդ 'ի գիրկս իւր հայցէր, որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս 'ի խաղաղութիւն: Պատնորոյ՝ ընդ ծերունւոյն Սիմէոնի վերագոչեմք առ քեզ՝ Տէր, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քովք 'ի փրկութիւն մեզ ՔՐԻՍՏՈՍ Աստուած փառք քեզ:

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԶՊազարու ննջումն՝ որպէս կանխագէտ յառաջ ասէիր. որ և 'ի բեթանիա յառաջէիր՝ զի յարուցցես զսիրելին քո, Ընդ՝ և մեք գոչելով ասեմք, օրհնեալ որ գաս 'ի չարչարանս կամաւ Հօր՝ 'ի փրկութիւն անձանց մերոց:

Յորժամ եկեալ կենարարդ 'ի գերեզմանն Ղազարու. յորժամ եկեալ կենարարդ 'ի գերեզմանն Ղազարու. աւետաւոր ձայնիւդ աղաղակէիր ասելով՝ Ղազարէ արի՛ եկ արտաքս: Խսկ մեռեալն 'ի գերեզմանէն յարեաւ. և նոյն ինքնդ զանմահութեան պարգևսդ ետուր սիրելւոյդ, և Աստուածային ձայնիւդ 'ի գերեզմանէն կոչեցեր: Պատնորոյ՝ և մանկունք Եբրայեցւոց ոստովք օրհնէին զանմահ թագաւորութիւն քո: Ընդ նոսին և մեք ասեմք, Ովսաննա՝ օրհնեալ է գալուստ քո. օրհնութիւն 'ի բարձունս, օրհնեալ որ գալոցդ ես անուամբ Տեառն:

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Յնծա՛ Երուսաղէմ և զարդարեա՛ զառագաստ քո Սիոնի. քանզի՝ ահա թագաւոր քո ՔՐԻՍՏՈՍ նստեալ 'ի յաւանակի նորոյ՝ հեզութիւն ցուցանելով զայ մտանէ յառագաստ քո: Եւ մեք աղաղակեմք, Ո՞վսաննա օրհնեալ եկեալ 'ի յանուն Տեառն. որ ունի զմեծ ողորմութիւն:

ՁԱՏԿԻ

ՔՐԻՍՏՈՍ յարեաւ 'ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց. և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս. Ամէն:

ՑԻՆԱՆՑ

Ի՛հաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անսկիզբն 'ի Հօրէ անճառաբար մարմնացաւ 'ի կուսէն. խաչի համբերելով և կամաւոր մահուամբն իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց շնորհս։

Վանդի յարեաւ 'ի մեռելոց ՎԱՐԻՍՏՈՍ Աստուած յաւիտենից՝ արարիչ և յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց և ամենայն զուարթիւնք երկնից։ Ի՛նդ որս գոչելով ասեմք փառք սոսկալի յարութեան քո Տէ՛ր։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Հիացան վերնական բազմութիւնք տեսանելով զքեզ 'ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին. ո՞վ է դա որ դիմեալ գայ յԵդովմայ. և եկեալ մտանէ փառօք 'ի փառս. Տէ՛ր փառք քեզ։

Ո՞ր յանպատումաթռուցնոտիս և յանմատնոցն վերաբերսիս, անհասանելի բանդ Աստուած 'ի յերկրի երևեցար ճշմարիտ մարդ. զտնորէնութեանն կատարեալ զխորհուրդ, խաչի և մահու համբերեցեր. և զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութեամբ.

այսօր համբարձար փառօք 'ի յերկինս և զկուսածին մարմնիդ քո հրաշափառապէս լուսազարդեցեր՝ զոր տեսեալ Եսայիաս՝ նախաձայնեալ ասէր, ո՞վ է սա որ դիմեալ գայ յերկրէ։ Հիացեալ պետութեանց երկնից գոչէին առ միմեանս, համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր, և մտցէ Թագաւոր փառաց։ Ի՛նդ՝ որ յամենայնի կարողդ ես և հզօր, շնորհեա՛ և մեզ հանդիպիլ քեզ ամպովք 'ի միւսանգամ քո գալստեանդ. որ միայնդ ես մարդասէր։

ՀՈԳԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Ի՛սուսա՛ծ զքեզ խոստովանիմք զսուրբ Հոգիդ և երկիրպագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս և խաղաղարար աշխարհի. որ զտգիտութիւն աշակերտացն քաղում գիտութեամբ լցեր. և 'ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելիօք ցուցար նոցա. աղաղակեմք Տէ՛ր խնայեա՛ և կեցո՛ զմեզ։ ՐՀ. Ի՛սոր 'ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգիստ յառաքեալսն՝ լուսաւորելով զնոսա. և այժմ աղաչեմք զքեզ սուրբ Հոգիդ Աստուած, որ ես պատճառ կենդանութեան եղելոց և խաղաղարար աշխարհի. խնայեա՛ և կեցո՛ զմեզ։

գԸ. Պատուոյ և մեք զՀոգիդ սուրբ Աստուած ընդ Հօր և ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք. և հայցեմք մեզ 'ի վերնատուողէդ զՀոգևորական խաղաղութիւնդ. Տէր փառք քեզ։

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Երևի Տէրդ այսօր աշակերտացն 'ի թաքօրական լերինն. և աշակերտացդ զարհուրեալք աղաղակէին ասելով. արասցո՛ւք երիս տաղաւարս՝ մի Տեառնդ, և մի Մովսիսի և մի Եղիայի։ Երդ՝ և մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քո Ճշմարիտ վկայիցդ. առաքեա՛ 'ի մեզ զլոյս քո շնորհացդ 'ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո՛։

ԽԱՉԻ

Դռաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն սրբոյ Աստուածային քոյ նշանի՝ շնորհեա՛ զերկնային ըզխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

ԷՋՄԻԱԾՆԻ

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ աղօթիւք և միջնորդութեամբ բազմաչարչար վկային քոյ և հօրն մերոյ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, մեծաւ փառօք և բազմութեամբ զօրացդ լուսեղինաց իջեր յերկնից 'ի դաշտն Արարատեան, յայցելութիւն փոքու հօտիդ քոյ ազգիս Հայոց՝ և 'ի ցուցումն յատկականի սիրոյդ և մեծի ողորմութեանդ. և ոսկեուռամբ բաղխեցեր զխորս անդնդոց. և հալածեցեր զգունդս սանդարամետականաց. ուր և լուսաձև յօրինմամբ հրաշակերտեցեր զմայր աթոռն մեր զսուրբ Էջմիածին. և արարեր զնա ըշտեմարան անսպառելի շնորհացդ Աստուածայնոց՝ 'ի լինիլ ծնօղ՝ դաստիարակ և կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց։ Երդ՝ պահեա՛ զնա անարատ, հաստատուն և անաղօտ, 'ի պայծառազարդութիւն եկեղեցեացս մերոց և մանկանցս սոցին՝ մինչև 'ի կատարած աշխարհի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ անուն քո յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԵԿԵՂԵՑԻՈՑ

Օ՛խաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն 'ի թշնամեաց պատերազմէ. և հաստատեա 'ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր և Աստուած կեցո՛ զմեզ։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ

Օ՛յառաջընթացութիւն քո և զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով՝ որ 'ի ձեռն կնոջն գնախաստեղծն 'ի դրախտէն արտաքս ընկէց։ Ա՛յժմ և այժմ Հերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ. և բաղմելոցն Հերովդիայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց՝ զի զքոյդ հատցէ զգլուխ որ զամենեցուն ձեռնադրեցեր ըզգլուխն ՎԱՐԻՍՏՈՍ։ Ա՛յլ դու որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա որուամ ձեռնադրեցեր պարգևել զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն։

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

Յնծա՛ այսօր ցնծա՛ և զուարճացիր կա-

թուղիկէ եկեղեցի՛ սուրբ՝ յիշատակաւ սրբոյն Ստեփաննոսի նախավկային ՎԱՐԻՍՏՈՍԻ վկայեցելոյ հօր։ Որ աղօթիւք բանայր զերկինս զոր փակեաց Ադամ. և հրեշտակակեր տեսլեամբ տեսանէր զկերպարանն հօր 'ի կերպի Ադամայ նստեալ 'ի յաթոռ փառաց։ Որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս հաւաքելով՝ բոլորէր պսակս փոխանակ փշոցն և եղեգանն։ Ա՛յլ զմարտիրոսական արիւնն իւր խառնէր ընդ փրկական արեանն ՎԱՐԻՍՏՈՍԻ հոսեցելոյն 'ի կողէն։ Ո՛ ամենորոյ՝ գերազանցեալ 'ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցէ և վասն մեր 'ի վերնատուողէն զպարգևս կենաց անվախճանից և զմեծ զողորմութիւն։

Յորովայնէ ընտրեալ սուրբն Ստեփաննոս, յորովայնէ ընտրեալ սուրբն Ստեփաննոս. վկայ ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ 'ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէր առ ՎԱՐԻՍՏՈՍ Աստուած դասելով՝ մի հաւարիր սոցա զայս մեղս։ Ա՛յդ՝ 'ի ձեռն սորին բարեխօսութեանն շնորհեա՛ մեզ Տէր զմեծ քո զողորմութիւնդ։

ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Յնծայ այսօր ցնծայ և զուարճանայ Ե-

կեղեցի սուրբ՝ տոնելով մեծաւ հանդիսի զհանրատենչ յիշատակս քո՝ ով գերազան. ցեալդ 'ի հարս սուրբ հայրապետ և լու. սաւորիչ տանս Թորգոմայ սուրբդ Գրիգո. րիս ։ Որ քոյով անտանելի չարչարանօքդ զաշխարհս ամենայն հիացուցեր ։ Ընօրինակ ճգնութեամբդ զհրեղէնսն զարմացուցեր. որք և գունդ գունդ յերկնից 'ի յերկիր խոնարհեալ՝ 'ի տես հանդիսի նահատակու. թեանդ փութային ։ Եւ անհամեմատ համ. բերութեամբդ զգոռոզացեալ արքայն իւ. րական զօրօքն ընդ ոտիւքդ նուաճեցեր ։ Եւ Աստուածահաճոյ աղօթիւքդ զկուրա. ցեալ միտս նոցին լուսաւորեցեր և Աւետա. րանին ՎՐԻՍՏՈՍԻ պաշտօնեայս արարեր ։ Ընդ նմին և զազգս Հայոց նորոգ հոգևոր ծննդեամբ 'ի լոյս Աստուածգիտութեան ա. ծեր ։ Պանորոյ և յատկապէս լուսափայ. լեցար 'ի մէջ ամենայն սրբոց, և զառաքե. լականն ընկալար զաթոռ և զպատիւ, և ընդ նոսին պսակեցար 'ի ՎՐԻՍՏՈՍԷ Աստուծոյ ։ Արդ ով Հայր մեր և լուսաւորիչ հոգւոց մերոց. աղաչեմք զքեզ միարան ուխտիւք եկեղեցւոյ քոյ. զի յաւուրս հրաշալւոյ տօնի քոյ. յատկապէս բարեխոսիցես առ ՎՐԻՍՏՈՍ Աստուածն մեր, զի զեկեղեցիս և զմնացորդս ժողովրդեան քոյ

պահեսցէ 'ի խաղաղութեան՝ փրկելով 'ի. հոգևոր և մարմնաւոր թշնամեաց. զի և մեք միշտ զյիշատակս քո կատարելով՝ փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին յաւիտեանս. Ամէն ։

Գրիգոր սուրբ քահանայապետ՝ որ ըզ. հաւատս ուսուցեր և զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զերրորդութիւնն, պսակեցար յարքայու. թեանն. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր ։

ԱՌԱՔԵԼՈՅ

Առաքեալք և վկայք ՎՐԻՍՏՈՍԻ Աստուծոյ՝ ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդհանուր յարդեգրութիւն կենաց կոչելով, միաբանական սուրբ երրորդութեանն յորդորեցին երգել զփառս 'ի յաւիտեանս. Ամէն ։

ՈՐԴԻՈՅ ՈՐՈՏՄԱՆ

Այսօր ահաւոր ձայնք որոտման հնչեցին յերկնից 'ի յերկիր՝ կոչելով յորդեգրութիւն զմեզ վերնոյն Սիոնի. հաստատութիւնքն հաւատոյ և պարծանքն եկե.

ղեցւոյ. որք ցողով արեան իւրեանց մաքրեցին զտիեզերս յանօրէն կռապաշտութեանց. և միշտ հայցեն 'ի ՔՐԻՍՏՈՍԷ ըզքաւութիւն տօնողացս անուանց իւրեանց։ Ո՛րդ մաղթանօք սոցա ՏԷՐ՝ խնայեա 'ի փրկեալ քո ժողովուրդս որ միայնդ ես մարդասէր։

ՄԱՐԳԱՐԷԻՑ

ՏԷՐ որ հիմնեցուցեր զեկեղեցի քո 'ի վերայ վիմի հաւատոյ, և կարգեցեր 'ի սմա առաքեալս և մարգարէս, հովիւս և վարդապետս՝ առ 'ի հաստատութիւն սրբոց. և ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. 'ի խաղաղութեան զսա պահեա՛ Աստուա՛ծ որպէս մարդասէր։

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Օ՛հայրապետականն զարդարեցեր աթոռ 'ի յերկրի, առաքելական առեր զպատիւ յերկնուստ՝ ծառայ ՔՐԻՍՏՈՍԻ. ո՛վ երանելիդ 'ի հարս սուրբ հայրապետ։ Ո՛անզի՝ քո՛ վարդապետութեանդ սերմունք՝ բարեպաշտութեանդ բուսուցին հասկս. ուրախութեան պտուղ հատուցանելով և հաւատացելոցս փրկութիւն շնորհելով. վասն որոյ բարեխօսեա՛ առ ՏԷՐ վասն անձանց մերոց։

ԹԱԴԱՒՈՐԱՑ

Որպէս յետ Աստուածասէր Թագաւորին Իսրայէլի Եզեկիա՝ յարոյց Աստուած զՑովսէ՝ որ զամենայն կռապաշտութիւնսն 'ի բաց ընկէց, որպէս և զբարեպաշտն Կոստանդիանոս, որ զարիոսի զմոլորմն խափանեաց. և զմեծն Թէոդոս յարոյց Աստուածային նախանձուն վառեալ՝ ընդդէմ այնոցիկ որք զսուրբ Հոգին հայհոյէին։ Ո՛ւրդ՝ ո՛վ Աստուածարեալ և ուղղափառ սուրբ Թագաւոր՝ աղաչեա՛ զՏԷՐ 'ի փրկել զմեզ 'ի մարդապաշտ հայհոյութենէ. զի և մեք տօնեսցուք զյիշատակս քո՝ խընդրելով 'ի ՔՐԻՍՏՈՍԷ զհաշտութիւն և մեծ զողորմութիւն։

Որպէս յետ Աստուածասէր Թագաւորին Իսրայէլի Եզեկիա՝ յարոյց զՑովսէ՝ որ զամենայն կռապաշտութիւնսն հոյ ժողովրդեանն 'ի բաց ընկէց, որպէս և 'ի Նորումս յարոյց զանդրանիկն Թագաւորաց ըզբարեպաշտն Աբգարիոս, որ 'ի հեռաստանէ ծանեաւ զերկնաւոր Թագաւորն զՔՐԻՍՏՈՍ։

և հղև քարոզ Աստուածութեան նորա ընդ ծագս տիեզերաց։ Յետ նորին և զմեծն Տրդատիոս. որ իսպառ հալածեաց զդիւամոլ կռապաշտութիւնն յաշխարհէս Հայաստանեայց. և զարդարեաց Ճշմարիտ և ուղղափառ հաւատով։ Ընդ՝ ոմ Աստուածարեալ և բարեպաշտ սուրբ թագաւոր, աղաչեա զՏէր, 'ի փրկել զմեզ յանօրէն բռնաւորաց. զի և մեք տօնելով զյիշատակս քո՝ խնդրեսցուք 'ի ՎՐԻՍՏՈՍԷ զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն։

ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Ի տաճարի սրբոց և յիշատակի սրբոց մարտիրոսաց՝ զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա և աղօթիւք՝ զկենդանութիւնս մեր խաղաղացո՛ Աստուած որպէս մարդասէր։

ՃԳՆԱՒՈՐԱՑ

Ո՛զնաւորք ՎՐԻՍՏՈՍԻ, որք տանջանաց անօրինացն համբերեցիք և զմոլութիւն կռոցն խափանեցիք. դասաւորեալք ընդ հրեշտակս 'ի յերկինս. որք ունիք ըզհամարձակութիւն 'ի ՎՐԻՍՏՈՍԷ՝ բարե-

խօսեցէք կեցուցանել զանձինս մեր՝ զձեզ աղաչեմք։

ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Որք ծագեցան մեզ յարևմտից որպէս զարեգակն, և լուսաւորեցին համանգամայն աշխարհս Հայաստանեայց. փարատեցին ըզխաւարն անգիտութեան կռապաշտութեան. և լուսաւորեցին զամենայն հոգի հաւատով Աստուածգիտութեան։ Սոցա բարեխօսութեամբն ՎՐԻՍՏՈ՛Ն Աստուած՝ պարգևեա՛ աշխարհի քում զխաղաղութիւն. և անձանց մերոց զմեղաց թողութիւն. որպէս մարդասէր Տէր։

ԳԱՅԻԱՆԵԱՆՑ

Ո՛յաղթանակ ձեր զհանդէս զուարճացեալ տօնէ եկեղեցի սուրբ. քանզի՝ սրբութեամբ ստացայք զկուսութիւն. և 'ի մարմնի զանմարմնոցն ցուցիք զհանդէս։

ԿՈՒՍԱՆԱՑ

Ո՛արմացեա՛լք ՎՐԻՍՏՈՍԻ երկնաւոր փեսային դստերք վերին Սիոնի. խնդրեցէք

'ի ՎՐԻՍՏՈՍԷ զհաշտութիւն և զմեծ զո-
ղորմութիւն ։

ՎԱՐԴԱՆԱՆՑ

Յաշխարհական 'ի Ճակատամարտին, յաշ-
խարհական 'ի Ճակատամարտին և 'ի մեծ
պատերազմին ընդդիմամարտեալ լինէր անօ-
րինացն պատերազմ ։ Իսկ երանելի նահա-
տակքն՝ զմոլութիւն անօրինացն խափանե-
ցին և և յաղթող գտան. քանզի որոց ստա-
ցեալ էր՝ զԱստուածային զօրութիւն, ո՛չ
ժուժկալէր նոցա մարմնաւորական պատե-
րազմ։ Ընդ ՎՐԻՍՏՈ՛Ս Աստուած սոցա
բարեխօսութեամբ խնայեա՛ 'ի մեզ և ո-
ղորմեա՛ ։

ՋԻՆԱՒՈՐԱՑ

Օրական և վկայ Ճշմարիտ՝ քաջ նա-
հատակդ ՎՐԻՍՏՈՍԻ սուրբդ (Թէոդորո)։
որ փոխանակեցեր զմարմնդ ընդ հոգւոյդ
քում՝ փրկանս. և ո՛չ աՀեր զմտաւ զսպառ-
նալիսն անօրէն բռնաւորացն։ Ընտ վերին
աղաչեցութեամբն դիտելով զայրեցումն հոգ-
ւոց նոցա վասն այնորիկ լուցեր զտաՀար
կռոցն և անարգեցեր զպաշտամունս նոցա ։

Ընդ՝ 'ի յաղթող պատերազմի տօնողացս
զօր նահատակութեան քոյ, բարեխօսեա՛ առ
Տէր վասն անձանց մերոց ։

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Գնալով փառաց քոց 'ի փառս կաթու-
ղիկէ եկեղեցի քո ՎՐԻՍՏՈ՛Ս մեծապէս
պայծառանայ. քանզի՝ թագաւորեալքն 'ի
քէն դիմեալք 'ի յերկինս։ 'ի Սեբաստիա
նահատակին՝ 'ի յամոթ և 'ի քարընկէց յե-
րեսաց բանսարկուին։ Որք և քաջալերէին
զդիմեանս, զի մի լուծեալ ոք բաղանեօք
անցաւորիս պակասեսցի. այլ դողալով առա-
քինարար՝ զինքն ըղերձեալ 'ի յանիւս Աստ-
ուածային գանձուցն հոլովեցի աղաղակելով
առ ՎՐԻՍՏՈՍ։ Ընդ՝ սոցա բարեխօսու-
թեամբն՝ ընկալ և զորդէգրութիւն ժողո-
վոյս մերոյ 'ի յոյս սիրողաց քոց, Տէր փառք
քեզ ։

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Որ 'ի վերայ քերովբէիցն հանգչիս և 'ի
զօրացն հրեղինաց օրհնաբանիս, ի՛ջեր 'ի
Բաբիլոնն և փրկեցեր զերիս մանկունսն 'ի
հրոյն բռնութենէ։ Որք աղաղակելով գո-

չէին երգ նոր. ամենայն գործք օրհնեցէք և բարձր արարէք։ Թագաւոր փառաց և արարիչ բոլորից, որ մարդասիրապէս զԲաղաւոր 'ի սուրբ մանկունսն և փրկեցեր 'ի բորբոքեալ բոցոյն. որք անարգեցին զբռնութիւն Թագաւորին և շինեցին զզօրութիւն հրոյն։ ընդ նոսին և մեք քեզ վերագոչեմք, փրկեա զմեզ 'ի հրոյն յաւիտենից։ Օ՛ի դու միայն ես բազմագութ Տէր՝ քեզ փառք յաւիտեանս. Ամէն.

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Օ՛որ օրհնեն անլռելի ձայնիւ իմանալի Զօրութիւնք՝ երկնաւոր Նահապետութիւնք. Հրեշտակք և Հրեշտակապետք. Աթոռք և Տէրութիւնք. Իշխանութիւնք և Պետութիւնք. Սերովբէք և Քերովբէք. և մեք օրհնեսցուք զնոյն ամենասուրբ Երրորդութիւնն և զմ Աստուածութիւնն։

Այսօր երկրաւորս Եկեղեցւոյ քահանայապետութիւն ցնծայ հրաշափառապէս՝ զերկնաւոր քահանայապետութանդ կատարելով զտօնախմբութեան տօնս։ Այլ ընդ անմարմնականաց և հոգեղինաց դասուցդ՝ և մեք մարմնականքս և հողեղէնքս համաձայնեալ փառաւորեմք զփառաւորեցեալն 'ի ձէնջ։

Այդ՝ ով սուրբ Գաբրիէլ և Միքայէլ մեծ հրեշտակապետք բարձրելոյն. և ամենայն զինուորութիւնք երկնից, որք կայք միշտ առաջի աթոռոյ Աստուածութեանն. անդադար բարեխօս լերուք վասն մեր առ Տէր. վերաբերել զմեզ զամենեսեան ընդ ձեզ յերկնից արքայութիւնն. և միաձայն բարբառով երգել զփառս։

ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ՏՕՆԻՑ

Յարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, սրբոյն Յովհաննու կարապետին։ սրբոյն Ստեփաննոսի նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. և սրբոց Առաքելոց և Մարգարէից, Հայրապետաց և Վարդապետաց, Մարտիրոսաց և Թագաւորաց, Ճգնաւորաց և Կուսանաց, Նահատակաց և Միանձանց, և Ամենայն սրբոց քոց հնոց և Նորոց, Յայտից և Անյայտից, որոց այսօր է յիշատակ. զխաղաղութիւն և զերկնային ողորմութիւն քո պարգևեա մեզ մարդասէր Տէր։

Ս. Եւ ես խաղաղու՞։ Օրհնեա Տէր։
Ք. Օրհնութիւն և փառք՞։ Խաղաղու։
Դ. Եւ ընդ հոգւոյդ քում։
Ս. Աստուծոյ երկրպագեսցուք։
Դ. Առաջի քո Տէր։
Ք. Տէր Աստուած մեր. որոյ կարողու՞։

ՃԱՐՈՒ ՓՈԽՔ

ԸՍՏ ՊԱՏՐԱՃԻ ԱՒՈՒՐ

Մեծացուսցէ անձն իմ զՏէր։
Եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

ԵՒԻՐԱՆԵՒՑ

Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ։
Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ՁԱՏԵԷՆ

ՄԻՆՉ

Ց'ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏՆ

Գովեա՛ Երուսաղէ՛մ զՏէր։
Եւ օրհնեա՛ զԱստուած քո Սիոնէ։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո 'ի քեզ։
Զի՛ եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք նորա։
Տայնէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։
Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կենալ։
Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա. շընչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։
Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։
Զի՛չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր. և զդատաստանս իւր ո՞չ յայտնեաց նոցա։
Փառք Հօր և Որդւոյ՞։ Այժմ և միշտ՞։

ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ ՏՕՆԻՑ

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց։

Զի խոնարհեցոյց զունկն իւր առիս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա.

ՀԱԲԱԹԱՊԱՀՈՅ

Օրհնեցէք զՏէր ամենայն ազգք։
Գովեցէք զնա ամենայն ժողովուրդք։

Ե՝ պա՞ տե՛ ՃԱՀՈՒ ՀԱՐԱԿԱՆ ԷՈ՞Ր պարշ՞ՃԷ ՈՈ՞Ր. ԷՈ՞Ր ՅՈՐՅԱՀԷ Տ՞ՈՆՑՈ՞ՅԻՆ։

ԿԻՐԱԿԵԻՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ՈՒԹՆ ՁԱՅՆԻՑ

Ճ. Զ. Թագաւորքն փառաց ՔՐԻՍՏՈՍ. ԱԶ. որ վասն մեր մարմնացաւ 'ի սրբոյ կուսէն և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։ Ո՛ր ըզ-

թաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ 'ի մեռելոց իշխանութեամբ. միա՞։ Կարողապէս ըզդրունսն դը՛ժոխոց խորտակեաց. ե՛կեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծ զվայելչութիւն. միա՞։

ԱԿ։ Թագաւորեաց Աստուած 'ի վերայ հեթանոսաց. և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի. ժողովուրդք զՔՐԻՍՏՈՍ բարեբանեցէք։ Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ. քանզի շինջոյց զնայթոց մահու խաչիւն իւրով սրբբով. ժողո։ Յարեաւ Աստուած և տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան. և մանկունքք հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին. ժողո։

ԲԶ. Թագաւորին յաւիտենից մատուցուք զօրհներգութիւն՝ որ 'ի կուսէն մարմնացաւ. հաստատեաց զաշխարհս 'ի հաւատս անսասանելի. փառքք նմա այժմ և յաւիտեան։ Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած քան. և եհեղ զարիւն իւր սուրբ 'ի փը՛ր-

կութիւն տիեզերաց. փառ։ Աստուածա-
պէս յարուցեալ 'ի նորափոր 'ի վիմէն. լու-
սազարդեաց զեկեղեցի իւր սուրբ. 'ի փառս
և 'ի գովեստ անուան իւրոյ. փառ։

ՌԿ. Օրհնութիւն 'ի բարձունս. տնօրինե-
ցելոյն 'ի կուսէն Թագաւորին մերոյ. ալե-
լուիա ալելուիա։ Օրհնութիւն 'ի բարձունս.
անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ.
ալէ։ Օրհնութիւն 'ի բարձունս. անբա-
ժանելի և միասնական սուրբ երրորդու-
թեանն. ալէ։

ԴՁ. Թագաւորըն ՎՐԻՍՏՈՍ. օրհնու-
թեամբ երգով բարեբանեցէք ամենայն եր-
կիր։ Աբարողին երկնի և երկրի. մատուս-
ցուք երգով գոհաբանութիւն ամենայն եր-
կիր։ Երրորդութեանն և մի Աստուածու-
թեանն. մատուսցուք պատիւ երկրպա-
գութիւն յաւիտեանս ամէն։

ԳԿ. Լուսով Աստուածութեան քո ՎՐԻՍ-
ՏՈՍ. լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. պա-
հեա ըզսա անշարժ յաւիտեան։ Ցօնէ այսօր
Երուսաղէմ. հաւատացելոց բազմութեամբ.
զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահ։ Ան-
ցան դրունքք հաւատոյ նոր սիոնի. ընդ-
դունել զանմահ փեսայդ յառաջաստ. բաշ-
խէ զմարմին քո և զարիւն. պահ։

ԴՁ. Թագաւոր ՎՐԻՍՏՈՍ էակից Հօր և
հոգւոյն. որ վասն մեր մարմնացար 'ի սուրբ
կուսէն. Թագաւոր փառաց ՎՐԻՍՏՈՍ քեզ
փառք։ Որ կամաւոր մահուամբ ըզմահ
մեռուցեր. և անապական յարութեամբդ քո
նորոգեցեր զաշխարհս. Թա։ Որ կենդանա-
բար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ
զեկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ա-
սելով. Թա։

ԴԿ. Որ անքաւելի յաղթող զօրութեամբդ.
Թագաւոր ես երկնի և երկրի ՎՐԻՍՏՈՍ
Աստուած. օրհնաբանեմք ըզքեզ։ Որ փա-
ռակցութեամբ ընդ հօր վերօրհնիս յանմա-

հից. և խոնարհեալ մարմին ըզգեցեար փա-
ռաց թագաւոր. օրհ. Որ կարողապէս ըզ-
մահ կոխեցեր. և յարուցեալ լուսաւորեցե-
սուրբ զեկեղեցի անմահ էութիւն. օրհ։

ԿԻՆԱՆ

ՄԱՐԳԱՐԷՒՑ

ԱԶ. Ճառագայթ անՀառ լուսոյ անքննելի
Տէրութիւն. յառաջագոյն հրաշացուցեր ըզ-
տեսողութիւն մարգարէիցն. ի ջանեալով 'ի-
ստորինս Աստուածային տնօրէնութեամբ։
Որք ըզտաՀար հաւատոյ հիմնեցուցին զը-
նորհօք սուրբ Հոգւոյն. յոր ետուստ բանն
Աստուած եօթնարփեան Ճառագայթիւք.
ի ջա"։ Լրեալ յաշխարհի Ճըշմարիտ
մարդեղութեամբ. զոր քարոզեցին մեզ
հրաւիրողքն համագոյ Հօր և Հոգւոյն.
լուսաւորեալով զտիեզերս Աստուածային տնո-
րէնութեամբ։

ԿԻՆԱՆ

ՁՈՐԵՔՀԱՐԱԹ

ՊԱՀՈՑ ԵՒ ՈՒՏԵԱՑ

ԳԵ. Փառաբանութիւն առաքեմք քեզ Հայր
երկնաւոր. յիշեա զնընջեցեալսն մեր. և Հան-
գո ընդ սուրբսն քո։ Որ էակիցդ ես Հօր և
Հոգւոյ Որդիդ միածին. յիշեա զնընջեցեալ-
սն մեր. և Հանգո ընդ սուրբսն քո։ Որ
փառակիցդ ես Հօր և Որդւոյ Հոգիդ Ճըշմա-
րիտ. յիշեա զնընջեցեալսն մեր"։

ԿԻՆԱՆ

ՀԻՆԳՀԱՐԱԹ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԱԵ. Որ սիրողդ էք արարչին արարածոց
ՎՀՐԻՍՏՈՍԻ սուրբ առաքեալք. բարեխո-
սեցէք առ Տէր վասն մեր։ Որ քարոզդ էք
ընդ Հանուր տիեզերաց. ՎՀՐԻՍՏՈՍԻ սուրբ
առաքեալք. բա"։ Որ պըսակդ էք ամենայն
նկեղեցեաց. ՎՀՐԻՍՏՈՍԻ սուրբ առաքեալք.
բարե"։

ԿԸՆԼՈՆ

ՈՒՐԲԱԹՈՒ

ՊԱՀՈՑ ԵՒ ՈՒՏԵԱՑ

Դեկ. Որ անըսկիզբն յԷուԹեան եկիր յաշխարհ. մարմնացար 'ի կուսէն յաղագս մերոց պարտեաց. հանգո զնընջեցեալսըն մեր։ Որ 'ի Հօրէ լուսոյ ըյս ծագեցար մեզ և կեանք միածին Որդի Հօր համակոյակից. հանգո"։ Որ 'ի վերդ ես քան ըզմիտս և զխորհուրդս. և խաչի համբերեալ փըրկեցեր զտիեզերս. հանգ"։

ԿԸՆԼՈՆ

ՇԱԲԱԹԱՊԱՀՈՑ

ՅՈՐՈՒՄ ՍՈՒՐԲՔ ՈՉ ՏՕՆԵՍՑԻՆ

ԵՐԵՈՒՇԱԲԱԹԻ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ ԳԻՆՊԵՇԱԲԱԹԻ

Գձ. Վիրիստոս Աստըուած. յիշեա զնընջեցեալսն 'ի սուրբ անունդ քո։ Ի՛զգինս արեան քո Տէր. յիշեա և հանգո ընդ սուրբսս քո. Ի՛՝ 'ի միւսանգամ քո գալըստեանն. ըզնընջեցեալսըն. մեր յիշ"։

ԿԸՆԼՈՆ

ՈՒՐԲԱԹՈՒՑ

ԾՆՆԴԵԱՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԽԱՉԻ

Դեկ. Որ յանէից ստեղծօղ զոյից արարչակից Հօր Բանդ Աստըուած. Թողութիւն շնորհեա նընջեցեալց քոց ծառայից. յորժամ զաս գատել զոր անարատ ձեռօք ստեղծեր։ Որ 'ի Հօրէ առաքեցար. և մարմնացար 'ի սուրբ կուսէն. Թողութիւն"։ Որ 'ի խաչին անշընչացար. զմահու լուծեր զիշխանութիւն. Թողութիւն"։ Որ պըսակիչդ ես քոց սըրբոց. և անվախճան քարեաց բաշխօղ. Թողութիւն"։

ԿԸՆԼՈՆ

ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Գեկ. Ա՛ը՛գնաւորըք Ճըշմարիտք և վկայք Վիրիստոսի. որք գշարչարանս և ըզմահ յանձն առիք վասըն Տ՛տառն. զձեզ ունիմք

բարեխօս առ ՔՐԻՍՏՈՍ վասն անձանց մեր-
ոց։ Քանզի հեղմամբ արեան ձերոյ պայ-
ճառացան սուրբ զեկեղեցիք. և զ'ստուեր-
բամած խաւար կռապաշտութեանն բար-
ձիք. ըզձեզ"։ Յ'երկնային զօրք իջեալ 'ի
պատիւ պատարագի մահուան ձերոյ. և
զպըսակս անապական առ բերելով 'ի Հօրեն
լուսոյ. ըզձեզ"։

ԿԸՆԼՈՆ

ԾՆՆԴԵԱՆ

Դ2. Սուրբ զԱստուածածինն. օրհնու-
թեամբ մեծացուցանեմք։ Ընտաւոր հիր-
ուշտակն աւետարանէր. ըզծընեալ փրկ-
կիչն 'ի սրբոյ կուսէն։ Ընդ ուրախ լեր
բերկրեալդ. քանզի Տէր Տերանց է ընդ քեզ։

ԿԸՆԼՈՆ

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋԻ

Դկ. Ընծակիզբն բանն յանբոկրզբնական

'ի Հօրէ. և սկրզբնաւորեալ 'ի կուսէն մարմ-
ոյ զգեցմամբ. բովանդակելով յորովայնի.
և ընդ Հօր գոլով. և սահմանեալ ժամա-
նակաւ ծնեալ լինի. Աստուած և մարդ։
Մ'տեալ ընդ օրինօք անհիւթականն հո-
ղանիւթ գոլով. զի զհողածնեալքս Հօրն
ընծայեսցէ. Աստուածորդին որ 'ի ծոց Հօր.
տղայ քառամնօրեայ բառնի 'ի գիրկս ծե-
րունւոյն. և յայտնապէս ծանուցանի. Ա՛ս"։
Ամանորդ և Սիմէոնն ցընծայր հոգւովն ա-
ղաղակէր 'ի տաճարին. արդ ուրձակես ըզ-
ծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղա-
ղութիւն. զի ընդհանուր տեսի ըզփրկ-
կողդ. Ա՛ս"։

ԿԸՆԼՈՆ

ՁԱՏԿԻ

Ա2. Յարեաւ ՔՐԻՍՏՈՍ. 'ի մեռելոց ալէ-
լուիա։ Յ'կայք ժողովուրդք. երգեցէք
Տեառն ալէլուիա։ Յարուցելոցն 'ի մեռելոց
ալէլուիա. որ զաշխարհս լուսաւորեաց ա-
լէլուիա։

ԿԸՆԼՈՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Դ՚Հ. Այսօր երկնայնոցն ընդ մեզ. տօնա-
խմբեալով զյիշատակ սուրբ վարդապետացն.
որք լուսաւորեցին զՀաւատոյ մանկունս. և
ընդ հրեշտակացն դասս վերակարգեցան։
Այսօր առաքելոց և մարգարէիցն դասք.
տօնակից գոլով դրստեր վերին Սիոնի. Ի
յիշատակի սուրբ վարդապետացն. որք զի-
մաստից նոցին զխորոց յայտնեցին զխոր-
հուրդ։ Այսօր քահանայք և պաշտօնեայք
սուրբ եկեղեցւոյ. վերապատուեն զյիշա-
տակ սուրբ վարդապետացն. որով զարդա-
րեցան երկնային շնորհօքն. Երգեն ընդ նո-
սին զփառս յաւիտեան։

Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օ՚ի քո է կարողութիւն և զօրութիւն և"։
Դ. Պռօսխումէ։

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

ԸՍՏ ՊԱՏՐԱՃԻ ԱՒՈՒՐ

ԱՒԵՏԵԱՑ ԾՆՆԴԵԼՆ

ԵՒ

ԹԼՓԱՏՈՒԹԵԱՆ

Սուրբ Աստուած. սուրբ և հզօր.
սուրբ և անմահ. որ յայտնեցար վասն մեր.
ողորմեա՛ մեզ։ Երէց՝ հրէշտ։

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՔԻ

ԵՒ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Սուրբ Աստուա՛ծ". որ եկիր և գալոց ես.
ողորմեա՛ մեզ"։

ԽԱՉԻ, ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՅ ՏՕՆԻՑ
ԵՒ
ՊԱՀՈՅ

Սուրբ Աստուած". որ խաչեցար վասն մեր · ողորմեա՛ մեզ":

ՔԱՏԵՒ
ԵՒ
ՑԱՐՈՒԹԵԱՆ ԵՒԻՐԱԿԷՒՑ

Սուրբ Աստուած". որ յարեար 'ի մեռելոց · ողորմեա՛ մեզ":

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Սուրբ Աստուած". որ համբարձար փառօք առ Հայր · ողորմեա՛ մեզ":

ՀՈԳՒՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Սուրբ Աստուած". որ եկիր և հանգեար յառաքեալսն · ողորմեա՛ մեզ":

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Սուրբ Աստուած". որ յայտնեցար 'ի թաբոր լերինն · ողորմեա՛ մեզ":

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

Սուրբ Աստուած". որ եկիր 'ի փոխումն մեր քոյ և կուսի · ողորմեա՛ մեզ":

Ս · Լ֊ւ և ս խաղաղութեան ըղՏէր աղաչեսցո՛ւք ։

Դ · Տէր ողորմեա ։

Ս · Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի · և 'հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ · ըղՏէր աղաչեսցո՛ւք ։

Դ · Տէր ողորմեա ։

Ս · Վասն ամենայն սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց · ըղՏէր աղաչեսցո՛ւք ։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Վասն հայրապետին մերոյ Տէառնն (այս անուն) կենաց, և փրկութեան հոգւոյ նորին. զՏէր աղաչեսցուք։

Գ. Տէր ողորմեա։

Ս. Վասն վարդապետաց քահանայից սարկաւագաց դպրաց, և ամենայն ուխտի մանկանց նկեղեցւոյ. զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Վասն բարեպաշտ թագաւորաց և Աստուածասէր իշխանաց. զօրավարաց, և զօրաց նոցին. զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Վասն հոգւոյն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի ՔՐԻՍՏՈՍ նընջեցին. զՏէր աղաչեսցուք։

Դ. Յիշեա Տէր և ողորմեա։

Ս. Լոյս և միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ. զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Ընդ անձինս մեր և ընդ միմեանս Տէառն Աստուծոյ ամենակալիս յանձն արասցուք։

Դ. Քեզ Տէառնդ յանձն եղիցուք։

Ս. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Դ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Ս. Օրհնեա Տէր։

Ք. Օ՛ի ողորմած և մարդասէր ես՝։

Ճաշու Սաղմոսք ըստ պարզաձի և ապ ընթեռնուն զէրգն։ Եւ յետ սաղմոսին ասեն զԼեր։

ՊԱՀՈՑ

ԱՁ. Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Կամ. Վասն անուան քո Տէր՝ կեցուսցես զիս արդարութեամբ քով։

ԱԿ. Տէր՝ մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս։

Կամ. Օ՛կնացս իմ ուղիղ արա՛ ինձ ըստ բանի քում. և մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

ԲԶ։ Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ,

ԲԿ. Դարձ Տէր՝ և փրկեա զանձն իմ.

կեցո զիս Տէր՝ ըստ ողորմութեան քումմ։

ԳԶ. Վասն անուան քոյ Տէր՝ քաւեա զմեղս իմ, զի բազումմ եղեն յոյժ։

ԳԿ. Ողորմեա ինձ Տէր՝ զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

ԴԶ. Յիշեա Տէր՝ զգթութիւնս քո, և զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից։

Կոմ. Օմեղս մանկութեան իմոյ՝ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քումմ՝ վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր և ուղիղ ես։

ԴԿ. Տէր՝ ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Կոմ. Օմեղս մանկութեան իմոյ՝ և զանգիտութեան իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութեան քումմ՝ վասն քաղցրութեան քոյ. զի քաղցր և ուղիղ ես։

Կոմ. Ընդաղակեցի առ քեզ Տէր՝ և ասացի. [illegible] յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

ՀԱՐԱԹԱՊԱՀՈՑ

ԵՐԿՈՒՀԱՐԱԹ ԵՐԵՔՀԱՐԱԹ ՀԻՆԳ-ՀԱՐԱԹ

ԵՐԷ ԱԶ Ե ԴԿ ԼԻՆԷ։

ԲՀ. Լուկայք ցնծասցուք 'ի Տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։

ԳՀ. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն և բարձր արարէք զանուն նորա։

ԴՀ. Բարձր արարից զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ։ Գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա։

ԱՂՕՒՀԱՑԻ ԵՒԻՐԱԵՒՑ

Ընդաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք. Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանիրուք զի նա է Տէր Աստուած մեր։

Լա՛ արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանու-

թեամբ 'ի յարկս նորա։

Խստովանեալ եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Լաւ է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. յազգէ մինչև յազգէ ճշմարտութիւն նորա։

ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԱՁ. Դու յարուցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի. ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

ԵՄ. Մեծագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի Աստուած է. սաղմոս ասայէք նմա իմաստութեամբ։

ԱԿ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն 'ի նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

ԲՁ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած 'ի ձայն ցնծութեան։

ԵՄ. Աստուածն դու դարձեալ կեցուսցես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ։

ՐԿ. Լուրն Տէր Աստուած իմ 'ի հրամանս քո՝ զոր պատուիրեցեր. և ժողովք ժողովրդոց շուրջ եղիցին զքեզ. վասն այսորիկ 'ի բարձունս դարձ Տէր։

ԳՁ. Լուրախ եղիր Իսրայէլ յարարիչ քում, որդիք Սիոնի ցնծասցին 'ի թագաւորն իւրեանց։

ԳԿ. Լուկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որպէս զի ահեղ են խորհրդովք քան զամենայն որդւոց մարդկան։

ԴՁ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։

ԴԿ. Յարեաւ Աստուած՝ և ցրուեցան ամենայն թշնամիք նորա, փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

ՁԱՏԻՒ

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Ե'րուսաղէմ։

ՁԱՏԻՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՅԻՆԱՆՑ

ԵՒՐ. Դոլեալ է երուսաղէմ զՏէր,

ԲՐ. Լաւ օրհնեա զԱստուած քո Սիոնէ։

Ի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհ-
նեաց զորդիս քո 'ի քէզ։

Մ' եղ զսահմանս քո 'ի խաղաղութիւն.
պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Ուղարկէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանայ պատգամք նորա։

Ունէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։

Ընկանէ զսառն որպէս պատառս. առ ջի ցրտոյ նորա ո՞ կարէ կեալ։

Ուղարկէ զբան իւր՝ և հալէ զնոսա. շունչեսցեն հողմք՝ և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։

Մ'չ այսպէս արար ամենայն ազգաց Տէր. և զդատաստանս իւր ո՞չ յայտնեաց նոցա։

ԲԸ. Գովեա՛ Երուսաղէ՛մ զՏէր։"

ԳԸ. Տէ՛ր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

Օցանկութիւն սրտի նորա ետուր նմա. և զկամս շրթանց նորա ո՞չ արգելեր 'ի նմանէ։

Յաման արարեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո. և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի քարէ պատուականէ։

Կեանս խնդրեաց 'ի քէն. և ետուր նմա

ընդ երկայն աւուրս՝ յաւիտեանս յաւիտենից։

Մեծ են փառք նորա 'ի փրկութեան քում. զփառս մեծ վայելչութեան քո դիցես 'ի վերայ նորա։

Տացես զնա յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից. և ուրախս արասցես զնա յուրախութեան երեսաց քոց։

Թագաւոր յուսացաւ 'ի Տէր, յողորմութենէ բարձրելոյն նա մի սասանեսցի։

Գտցի ձեռն քո 'ի վերայ թշնամեաց քոց. և աջ քո գտցէ զամենայն ատելիս քո։

Դիցես զնոսա որպէս հնոց 'ի հուր. 'ի ժամանակի երեսաց քոց։

Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա. և հուր կերիցէ զնոսա։

Պտուղ նոցա յերկրէ կորիցէ. և զաւակ նոցա յորդւոց 'ի մարդկանէ։

Խոտորեցան 'ի քէն չարութեամբ. խորհեցան զխորհուրդ, զոր ո՞չ կարասցեն հաստատել։

Դարձուցես զնոսա հալածեալս՝ 'ի մնացուածս քո. և պատրաստեսցես զերեսս նոցա։

Բարձր լեր Տէր 'ի զօրութեան քում. օրհնեսցուք, և սաղմոս ասասցուք 'ի զօրութեան քում։

ԴԸ. Զքեզ վայելէ օրհնութիւն Աստուած 'ի Սիոնէ. և քեզ տացին աղօթք յերուսաղէմ:

ԵԸ. Տէր ով կացցէ 'ի խորանի քումում. կամ ով բնակեսցէ 'ի լեառն սուրբ քո:

ՈՒՐ. Տէր թագաւորեաց զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

ՀԲ. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակովբայ:

Բռէք սաղմոս, և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա 'ի ձայն քաղցրութեան:

Փող հարէք 'ի գլուխս ամսոյ, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց:

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք են Աստուծոյ Յակովբայ:

Վկայութիւնն Յովսեփու՝ զոր եդ ընդ նմա. որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ:

Ի բաց արար 'ի բեռանց զթիկունս նորա. և զձեռս նորա յորթ և թի ծառայելոյ:

Ի նեղութեան կարգացեր առիս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ 'ի գաղտնութենէ մրրկին, և փորձեցի զքեզ 'ի վերայ Ջուրցն հակառակութեան:

Լուր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ. և Իսրայէլ՝ թէ լուիցես ինձ:

Մի ևս եղիցին քեզ աստուածք առ ժամանակ. և մի երկիրպագանիցես դու աստուծոյ օտարի:

Այս եմ Տէր Աստուած քո՝ որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց. բաց զբերան քո՝ և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:

Արձակի Թողի զնոսա երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց:

Օ՜ի թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ, կամ Իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր:

Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա, և 'ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ:

Թշնամիք Տեառն ստեցին նմա, և եղիցին ժամանակք նոցա յաշխարհի:

Կերակրեաց զնոսա 'ի պարարտութենէ ցորենոյ, և 'ի վիմէ մեղր յագեցոյց նոցա:

ՆՈՐ ԿԻՐԱԿԷ

Գովեա՛ Երուսաղէմ զՏէր։
Լու՛ր օրհնեա՛ զԱստուած քո Սիոնէ։ Գէտ
սէՂ 57—58։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ
ՄԻՆՉ
Յ'ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ
ՏԱՍՆ ԱՒՈՒՐՑ

Ամբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վերս։ Համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։

Տեառն է երկիր լրիւ իւրով։ աշխարհ՝ և ամենայն բնակիչք նորա։

Զայս ինքն 'ի վերայ ծովու հիմունս էարկ նմա։ 'ի վերայ գետոց պատրաստեաց զնա։

Ո՞վ ելցեն 'ի լեառն Տեառն։ կամ ո՞վ կացցէ 'ի տեղւոջ սրբութեան նորա։

Որ սուրբ է ձեռօք և անբիծ սրտիւ։ որ ոչ էառ զնանրութիւն յանձն իւր։ և ոչ երդուաւ ընդ ընկերի իւրում նենգութեամբ։

Սա առցէ զօգնութիւն 'ի Տեառնէ։ զողորմութիւն յԱստուծոյ փրկչէ իւրմէ։

Այս ազգէ՝ որ խնդրէ զՏէր, խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակովբայ։

Ամբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վերս։ Համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց։ Տէր հզօր զօրութեամբ իւրով։ Տէր հզօր 'ի պատերազմի։

Ամբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վերս։ Համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։

Ո՞վ է սա Թագաւոր փառաց։ Տէր զօրութեանց՝ սա ինքն է Թագաւոր փառաց։

ՀՈԳԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

ԵՒՐ։ Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, և Բանիւ Տեառն երկինք հաստատեցան։ և Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

ԲՀ։ Լուկայք ցնծասցուք 'ի Տէր, աղաղակեսցո՛ւք առ Աստուած փրկիչ մեր։

ԳՀ։ Լերգեցէք Տեառն երգ նոր։ ծա-

ռայեցէք Տեառն ուրախութեամբ։

ԴԸ. Վասն անուան քո Տէր՝ կեցուսցես զիս, արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

ԵԸ. Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

ՈԻՐ. Յիշեա Տէր՝ զգթութիւնս քո, և զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից։

ԲԸ. Յղկեղեցիս օրհնեցէք զԱստուած, զՏէր յաղբերացն Իսրայէլի։



ՏԱՊԱՆԱԿԻ

Բրբ Տէր 'ի հանգիստ քո՝ դու և տապանակ կտակի սրբութեան քո։

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ԿԻՐ. Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա. ձայն եղև յամպոյն՝ որ ասէ, դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

ԲԸ. Բարձրութիւնք լերանց նորա են. նորա է ծով՝ և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին։ Եկայք երկիրպագցուք նմա. անկցուք և լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ։

ԳԸ. Որ են երկինք՝ և քո է երկիր. զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր։ զՀիւսիս և զՀարաւ դու արարեր. Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծացեն։

ՆԱԻԱԿԱՏԵԱՑ, ԽԱՉԻ

ԵԻ

ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԲ. Սիրեաց Տէր զՍիոն, և ընտրեաց զնակիլ 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

ԵԻՐ. Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո. և արա առիս նշան բարութեան։

ԲԸ. Լտուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցեն յերեսաց աղեղն։

ԳԸ. Սիրեաց Տէր զՍիոն, և ընտրեաց զնակիլ 'ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ

յաւիտեանս յաւիտենից. 'ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

ԴԸ. Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

ԵԸ. Որպէս սիրելիք են յարկք քո Տէր զօրութեանց. ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո։ Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցէ առ Աստուած կենդանի։

ՈՒՐ. Լաստուր երկիւղածաց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

ՇԲ. Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո՛ աջով քո, և լուր մեզ։

ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հիմունք նորա 'ի լեառն սուրբ նորա. սիրէ Տէր զդրունս Սիովնի առաւել քան զամենայն յարկան Յակովբայ։

ԵԻՍ

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո, ա՜հաւադիկ քաղաքդ Աստուծոյ։

ԵԻՍ

Տէր ոմ կացցէ 'ի խորանի քումմ. կամ

ոմ բնակեսցի 'ի լեառն սուրբ քո։

Որ գնայ անբիծ, գործէ զարդարութիւն. խօսի զճշմարտութիւն 'ի սրտի իւրում։

ԽԱՉԻ

Հաշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և եռուր ուրախութիւն սրտից մերոց։

ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ԻՆՆ ԱԻՈՒՐՑ

Ըստ յոյժ գեղեցկի Տօնացուցին

ԵԻՐ. Լայսօր ծնաւ որ 'ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդին. որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի։ Ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

ԲԸ. Ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

ԳԸ. Լրի Տէր 'ի հանգիստ քո. դու և տապանակ կտակի սրբութեան քո։

ԱՒԵՏԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ողորմեա՛ մեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

ՀՐԱՇԱԼՈՒՑԻ ԾՆՆԴԵԱՆ

Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ. և զօրութիւն բարձրելոյն հովանասցի քեզ։

ԾՆՆԴԵԱՆ

ԸՍՏ ՈՒԹ ԱՒՈՒՐՑ

Ա. Այսօր ծնաւ որ 'ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդին. որ է օծեալ Տէր 'ի քաղաքի Դաւթի։ Ի վայելչութիւն սրբոց քոց՝ յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

Բ. Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Ստեփաննոս. և ընտրեալ յորովայնէ։ Հշմարիտ վկայ. սիրող և առաքեալ առաքողին. 'ի-

ՔՐԻՍՏՈՍԷ ընկալար զզուարթնոցն զպսակս։

Գ. Կարապետն Յովհաննէս զարհուրեալ՝ 'ի յորովայնէ յորովայն երկրպագէր. սպասաւոր եղև Բանին Աստուծոյ. և լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով, ահա Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։

Դ. Ողորմեա՛ մեր բերկրեալդ Տէր ընդ քեզ՝ օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

Ե. Դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

Զ. Լցեան զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։ Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս իմ։

Է. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. և Տէր ընդ աջմէ քումմէ։

Ը. Լցրդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ՝ և ոչ ստեաց նմա, 'ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

Ը. Ողորմեա՛ մեր բերկրեալդ Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օրհնեալ է պտուղ որովայնի քո։

ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՔԻ

Տէր 'ի տաճար՝ սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում։

ՄԵԾԻ ՈՂՈՐՄԵԱՆ ՈՐ Է ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Տէր Աստուած մեր երևեցաւ մեզ. աւրարէք տօնս ուրախութեան կանխաւ, մինչև յանկիւնս սեղանոյ։

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Ողորմութեամբ Տեառն լի՛ եղև երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան. և Հոգւովք բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ

Պոռ մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԼԽԱՏՄԱՆ

Կարապետն Յովհաննէս զարհուրեալ՝ 'ի յորովայնէ յորովայն երկրպագէր. սպասաւոր եղև բանին Աստուծոյ. և լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով, ահա գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի։

ՄԱՐԳԱՐԷԻՑ

Յիշեցէք օրհնեցէք զԱստուած, և զՏէր յաղթերացն Իսրայէլի։

ԱՌԱՔԵԼՈՅ

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն

երկիր. և յիշեսցի անուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

ԴԱՒԹԻ ԵՒ ՅԱԿՈՎԲԱՑ

Յիշեա՛ Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

ՆԱԽԱՀԱՐՑ

Պատմէ զքան իւր Յակովբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։

ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

Ջամբերելով համբերի Տեառն, և նայեցաւ առիս. և լուաւ աղօթից իմոց։

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

Քահանայք քո զգեցին զարդարութիւն.

և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

ՃԳՆԱՒՈՐԱՑ

Լրանելի են որք բնակեալ են 'ի տանս Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

ԿՈՒՍԱՆԱՑ

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ՝ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա՝ և զընկերս նորա տարցին նմա։

ԹԱԳԱՒՈՐԱՑ

Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. 'ի փրկութեան քում ցնծասցէ յոյժ։

ՔԱՌԱՍՆԻՑ ԵՒ ԵՐԵՔՈՒՑ ԲԻՒՐՈՑ

Ընցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հաներ զմեզ 'ի հանգիստ։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹՒ

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝ ակն յանդիման նեղչաց իմոց։

ԱՅԳՈՒՑ

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտու եղիցի ուրախութիւն։

ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

ԱԶ. Տէր սիրէ զիրաւունս. և ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա։

ԿՄ. Փրկութիւն արդարոց 'ի Տեառնէ. վերակացու է նոցա 'ի ժամանակս նեղութեան։

ԱԿ. Պարծեսցին սուրբքն փառօք՝ և

ցնծասցեն 'ի հանգիստ իւրեանց՝ և բարձր բասցեն զԱստուած բերանօք իւրեանց։

ԲԿ. Կարդացին արդարքն առ Տէր, և Տէր լուաւ նոցա. յամենայն նեղութենէ նոցա փրկեաց զնոսա։

ԳԶ. Ոյսն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար 'ի զենումն։

ԳԿ. Արդարք լիցին ամենեքեան՝ ոյք յուսացեալ են 'ի քեզ. յաւիտեան ցնծասցեն. և բնակեսցիս դու 'ի նոսա։

ԴԶ. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին։

ԴԿ. Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր. և պահէ զամենայն ոսկերս նոցա. և մի 'ի նոցանէ ոչ կորիցէ։

Աւ ընդեռանիէ զոր-ցէ Աւետարանն ըստ դաշնաց ա-ա-ր, ըստ ցո-ցակէ Տօնացո-ցեն։ Ե-յեղոյ ասի հանգանակ հա-ապոյ։

Դ. Փառք քեզ. Տէր Աստուած մեր։

ՀԱՆԳԱՆԱԿ
ՀԱՒԱՏՈՅ

ԵՐԵՔ ՀԱՐԻՒՐ ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹ ՀԱՅՐԱ-ՊԵՏԱՑ ՆԻԿԻՈՅ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ

Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և անտեսանելեաց։ Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ. Լոյս 'ի Լուսոյ. Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ։ Ծնունդ և ոչ արարած։ Զոյն ինքն 'ի քնութենէ Հօր. որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի. երևելիք և անտեսանելիք։ Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւոյն սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի, և զմիտ. և զամենայն որ ինչ է 'ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն և նստաւ ընդ աջմէ Հօր։ Պալոց է

նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։ Հաւատամք և 'ի սուրբ Հոգին. յանեղն և կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յԱւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան. քարոզեաց զառաքեալն. և բնակեցաւ 'ի սուրբսն։ Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից. հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ՝ յոչէից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինիլ զՈրդին Աստուծոյ՝ և կամ զսուրբ Հոգին։ Եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք։ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի։

Ս. Օրհնեա Տէր։

ՑԵՏ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԻԿԻՈՅ

ԱՍԱՑԵԱԼ

Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԵ ԼՈՒՍԱՒՈՐՉԷՆ ՄԵՐՄԷ

Ք. Իսկ մեք փառաւորեսցուք. որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ս. Լու ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Լու ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք 'ի Տեառնէ Աստուծոյ և 'ի փրկչէն մերմէ ՅԻՍՈՒՍԷ ՎԱՐՈՒՍՈՅՆ 'ի ժամուս պաշտման և աղօթից։ Զի արժանի ընդունելութեան արասցէ լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց։ Ընկալցի ըստ ողորմութեան սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր ողորմեսցի 'ի վերայ մեր։ Զողթ մեր և խընդրուածք յամենայն ժամ. մտցին առաջի մեծի Տէրութեան նորա։ Լու նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակիլ 'ի գործս քարիս։ Զի զողորմութեան ըստ ընչնորհսն իւր. արասցէ 'ի վերայ մեր. Տէրն ամենակալ. կեցուսցէ և ողորմեսցի։

Դ. Կեցո Տէր։

Ս. Զամ սուրբ պատարագիս և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի Տեառնէ խնդրեսցուք։

Դ. Շնորհեա Տէր։

Ս. Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց. 'ի Տեառնէ խնդրեսցուք։

Դ. Շնորհեա Տէր։

Ս. Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց. 'ի Տեառնէ խնդրեսցուք։

Դ. Շնորհեա Տէր։

Ս. Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն յօգնութիւն անձանց մերոց. 'ի Տեառնէ խնդրեսցուք։

Դ. Շնորհեա Տէր։

Ս. Լու ևս միաբան վասն Հրշխարիտ և սուրբ հաւատոյս մերոյ՝ զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Զանձինս և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Դ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Ս. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք

ամենեքեան միաբանութեամբ ։

Դ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա ։

Ս. Օրհնեա Տէր ։

Ք. Որպէս զի արժանաւորք"։ Խաղա" ։

Դ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Ս. Աստուծոյ երկրպագեսցուք ։

Դ. Առաջի քո Տէր ։

Ք. Խաղաղութեամբ քով ՎԱՐԻՍՏՈՍ փրկիչ մեր, որ'ի վերէ քան" ։

Ս. Օրհնեա Տէր ։

Ք. Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ։

Ս. Մի ոք յերեխայից. մի ոք 'ի թերահաւատից. և մի ոք յապաշխարողաց. և յանմաքրից մերձեսցի յԱստուածային խորհուրդս ։

Դ. Մարմին Տէրունական. և Արիւն Փրկչական. կայ առաջի. երկնային զօրութիւնքն աներևոյթս. երգեն և ասեն անհանգիստ բարբառով. սուրբ. սուրբ. սուրբ Տէր զօրութեանց ։

Ս. Աղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. դրպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգըս հոգևորս ։

ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ

ԸՍՏ ՊԱՏՐԱՃԻ ԱՒՈՒՐ

ՅՈՆՆԴԵԱՆ ԱՒԵՏԵԱՑ

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Բազմութիւնքք հրեշտակաց. և զօրաց երկընաւորաց. իջեալ 'ի յերկնից ընդ ըմիածին թագաւորին ։ Որք երգէին և ասէին. սա է Որդին Աստուծոյ. ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք երկինք և ցընծասցեն հիմունք աշխարհի ։ Զի Աստուածն ըյաւիտենական 'ի յերկրի երևեցաւ. և ընդ մարդկան շրջեցաւ. զի կեցուսցէ զանձինս մեր ։

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹ

Որ վերայ նըստիս 'ի կառս հրանիւթա

քառակերպեանս։ Ընձառելի բանիդ Աստուած։ Այսօր ի՛ջեալ 'ի յերկրնայնոցն ըվասն ըքոյ արարածոցս. յանձն առեր բազմիլ ընդ աշակերտսն։ Եւ Սերովբէքն և Քերովբէքն հիացեալ զարմանային. և պետութիւնքդ վերին զօրացն ը'սքանչացեալ աղաղակէին ասելով. սուրբ. սուրբ. սուրբ Տէր զօրութեանց։

ՅԻՆԱՆՑ ԵՒ ԽԱՉԻ

Ով է որպէս Տէր Աստուած ը'մեր. խաչեցաւ վասըն մեր. Թաղեցաւ. և յարեաւ հաւատարիմ եղև յաշխարհի՝ և համբարձաւ փառօք։ Եկայք ժողովուրդք. զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նըմա ասելով. սուրբ. սուրբ. սուրբ ես Տէր Աստուած ը'մեր։

ԵՒԻՐԱԿԷԻ. ԵԿԵՂԵՑԻՈՅ. ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

ԵՒ

ՀՐԵՇՏԱԿԱՑ

Հրեշտակային կարգաւորութեամբ լըցեր Աստուած. զքո՝ սուրբ զեկեղեցի։ Հա՛զարըք հազարաց հրեշտակապետըք կան առաջի քոյ։ Եւ բիւրըք բիւրոց հրեշտակըք պաշտեն ըքեզ Տէր. և 'ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն։ Զայնիւ խորհրդական. սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութեանց։

ՊԱՀՈՑ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Ո՞ան յիշատակի հանգուցեալցն. ընկալ Հայր սուրբ մարդասէր ըզպատարագս։ Եւ համարեա զՀոգիս նոցա. 'ի թիւ սրբոց քոց յարքայութեանդ երկնից։ Ո՞անաւանդ՝ զի հաւատով մատուցցուք ը'զպատարագս. հաշտեսցի Աստուածութիւնդ. և հանգուսցէ զՀոգիս նոցա։

ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

Սրբութիւն սրբոց մեծ ես և ահաւոր։ Այս զինքնուրոյթիւնքդ հրեշտակացն օրհնեն ըզքեզ և ասեն։ Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն։

ՄԱՐԳԱՐԷՒՑ · ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

Ամենակալ ես Տէր զօրութեանց · որ թագաւորդ ես յաւիտենից։ Որ նըստիս յերկնից 'ի յերկինս և լոյս ծագես յարարածըս քո։ Որ խոնարհութեամբ իջեր 'ի յերկիր · քեզ պատարագըս մատուցանեմք։ Այս սուրբ զանունըդ քո փառաւորեմք · Տէր որ պըսակիչդ ես քոց սրբոց (այս անուն)։ Վասըն զի սոքա են մեզ բարեխօս։ Տէր ամենակալ 'ի քումմ յարքայութեանդ։

Ե՝ Ըէ հանդիսաւոր օր լինի, և զոր-բէ խորհուրդն վերէերել կոչիցի, այս է սրբարանութիւն։ Յորժամ ժամանայն ասէ։

Գ · Տէր Աստուած օրհնեսցէ զամենասեանդ։

Ե՝ սուրբ-ագն ցայնէ։

Ս · Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ։

Ե՝ Զպերիս երգեն զՍրբասացութիւնն՝ ըստ պարշաճի սուրբ կանգնելոյ։

Ս · Մի ոք յերանայից · մի ոք 'ի թերահաւատից։

Դ · Մարմին Տէրունական · և։

Ե՝ գան ինչ-ինչ-ելով 'ի զոր-բէ խորհուրդն։

Ս · Յարևու էհար ըզխորանս իւր · և ինքն որպէս փեսայ · զի ելանէ յառագաստէ իւրմէ։

Դ · Այս ցընծայ նա որպէս հրսկայ · յընթանալ ըզճանապարհս իւր։

Ս · Որք ըզքրովբէիցն։

Դ. Խոր հրդեհաբար կերպարանիմք։

Ե. Գոն յորելելոյ կողմն։

Ս. Ճանապարհ արարէք այնմիկ՝ որ նըստի յերկնից երկինս ընդ արևելս։

Դ. Լու կենդանարար Երրորդութեանն. զերեքսրբութեան օրհնութիւնս մատուցանեմք։

Ե. Գոն 'է հարաւակողմն։

Ս. Լցուած 'ի Հարաւոյ եկեսցէ. և սուրբն 'ի փառան լեռնէ։

Դ. Ամենայն ըզկենցաղականս 'ի բաց դընելով ըզգործս։

Ե. Գոն յարևելեան խորանն, և բարձօղ ընտոր խորհրդոյն առաջոյ հանդարտութեամբ։

Ս. Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձին դրունք յաւիտենից, և մտցէ Թագաւոր փառաց։

Ե. պարարգելն ինկարկէ և հարցանէ։

Ք. Ո՞վ է սա Թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարող 'ի-

պատերազմի։

Դ. Որպէս զի՝ զԹագաւորն ամենեցուն ընդունիցիմք։

Ս. Համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր. համբարձին դրունք յաւիտենից. և մտցէ Թագաւոր փառաց։

Ք. Ո՞վ է սա Թագաւոր փառաց և Տէր զօրութեանց։

Դ. Լու ըզհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք ըզկարգ։

Ս. Սա ինքն է Թագաւոր փառաց։

Ե. պարարգելն երկրպագէ ահի- և դողութեամբ՝ և առնու 'ի ձեռաց սարկաւագին, և խաչանդէ 'ի վերոյ ծաղկեալ ծածկոցն սուրբ։

Ք. Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Դ. Ալելուիա։

Լու և սս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Դ. Տէր ողորմեա։

Ս. Լու և սս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ։ Մի խրդճիւ և գայթակղութեամբ. մի նենգութեամբ խորամանկութեամբ. մի պատրանօք և խաբէութեամբ. մի երկմտութեամբ և մի Թերահաւատու-

թեամբ. այլ ուղիղ վարուք. պարզ մտօք. միամիտ սրտիւ. կատարեալ հաւատով։ Լ՝ըցեալ սիրով լի և առաւելեալ ամենայն գործովք բարութեան։ Կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. և գըտցուք զողորմութեան ըզշնորհս։ Յաւուր յայտնութեան և 'ի միւսանգամ գալըստեան՝ Տեառնն մերոյ և փրկչին ՅԻՍՈՒՍԻ ՎԱԼԷՐԻՍՏՈՍԻ. կեցուսցէ և ողորմեսցի։

Դ. Կեցո՛ Տէր և ողորմեա։

Ս. Օրհնեա Տէր։

Ք. Շնորհօք և մարդասի՛։ Խաղա՛։

Դ. Լո՛ ընդ հոգւոյդ քում։

Ս. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դ. Առաջի քոյ Տէր։

Ս. Ո՛ղջոյն տուք միմեանց 'ի հա՛մբոյր սրբութեան. և որք ո՛չ էք կարողք հաղորդել Աստուածային խորհրդոյս՝ առ դըրսնըս ելէք և աղօթեցէք։

Դ. ՎԱԼԻՍՏՈՍ 'ի մէջ մեր յայտնեցաւ. որ է՛նն Աստուած աստ բազմեցաւ։ Խաղաղութեան ձայն հընչեցաւ. սո՛ւրբ ողջունի հրա՛ման տըւաւ։ Լ՝կեղեցիս մի անձն եղև. համբոյրըս յոդ լըրման տըւաւ։ Թ՝շնամութիւնըն հեռացաւ. սէրն ընդհանուրս սըփռեցաւ։ Լ՝ըդ պաշտօնեայք բարձեալ ըզձայն. տո՛ւք զօրհնութիւն 'ի մի բերան։

Միասնական Աստուածութեանն. որում Սրովբէքն են սըրբաբան։

Ոմանք և զայս ասէն 'ի հանդիպոյ գօնի։

Ս. Որք հաւատով կա՛յք յանդիման. սուրբ սեղանոյս արքայական։ Տեսէք բազմեալ զՎԱԼԻՍՏՈՍ արքայն. և շուրջ պատեալ զօրք վերնական։

Դ. Վ՝ասն համբառնամք զաչս ունելով. և պաղատիմք զայս ասելով։ Ո՛ղորմեցո՛ մեր մի՛ յիշեսցես. այլ գթութեամբ քո քաւեսցես։ Ի՛նդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ. և՛ ընդ սրբոց քոց Տէր փառըք քեզ։

Ս. Ո՛հիւ կացցուք. երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք. և նայեցարուք զգուշութեամբ։

Դ. Ի՛ր քեզ Աստուած։

Ս. Պատարագ ՎԱԼԻՍՏՈՍ մատչի՛ գառն Աստուծոյ։

Դ. Ողորմութիւն և խա՛ղաղութիւն և պա՛տարագ օրհնութեան։

Ս. Օրհնեա Տէր։

Ք. Շնորհք՝ սէր՝ և Աստուածային սըրբարար զօրութիւնն։

Դ. Լո՛ ընդ հոգւոյդ քում։

Ս. Ի՛ զգրունս ըզգրունս. ամենայն ի-

մաստուԹեամբ և ըզգուշուԹեամբ։ Ի վեր ընծայեցուցէք ըզմիտըս ձեր Աստուածային երկիւղիւ։

Դ. Լինիմք՝ առ քեզ Տէր ամենակալ։

Ս. Յ՚ու գոհացարուք ըզՏեառնէ բոլորով սրտիւ։

Դ. Արժան և՛ իրաւ։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. Յու ընդ Սերովբէին և ընդ Քերովբէին։

Իսկ 'ի հանդիսեան սուրբ՝ ասեն զկնի Արժան և իրաւէն սուրբ զոյս։

Ս. Յ՚ու զըստոյգ փրկուԹեան որ միշտ ըն՚դ ամենայն տեղիս գոհուԹիւն մատուցանեմք քեզ ՏԻՐԻՍՏՈՍ։ Որով և ըզհրաշալի զյարուԹիւնդ քո գովեն զօրուԹիւնք։ Սարսին Սերովբէքն. գողան Քիրովբէքն. և լիշխանուԹիւնք վերին պետուԹեանցն պարառեալ ձայնիւ երգանակին և ասեն։

Դ. Սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրուԹեանց։ Լի են երկինք և երկիր փառօք քո. օրհնուԹիւն 'ի բարձունս. օրհնեալ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն. Ովսաննա 'ի բարձունս։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. Դէք կերէք այս է ՄԱՐՄԻՆ"։

Դ. Ամէն։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. Խրեցէք 'ի սմանէ ամենեքեան այս է ԱՐԻՒՆ"։

Դ. Ամէն։ ՀԱՅՐ երկնաւոր. որ զՈրդիդ քո ետուր 'ի մահ. վասըն մեր պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա. աղաչեմք ըզքեզ ողորմեա քո բանաւոր հօտի։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. Յու զքոյս 'ի քոյոց՝ քեզ մատուցա"։

Դ. Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք ըզքեզ. գովեմք ըզքեզ. գոհանամք ը՚զքէն. աղաչեմք ըզքեզ Տէր Աստուածմեր։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. ԽաղաղուԹիւն ամենեցուն։

Դ. Յու ը՚նդ հոգւոյդ քում։

Ս. Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դ. Առաջի քոյ Տէր։ Որդի Աստուծոյ. որ պատարագեալ հօր 'ի հաշտուԹիւն հաց կենաց բաշխիս 'ի մեզ հեղմամբ Արեան քո սուրբ. աղաչեմք ըզքեզ ողորմեա առեամբ քով փրկեալ հօտի։

Ս. Օրհնեա Տէր։

Փ. Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ

մերձեցելոցս · յան" ։

Դ · ՀՈԳԻ Աստուծոյ · որ զփառակցի քո՝ զխորհուրդ · ի՛ջեալ 'ի յերկնից կատարես, 'ի ձեռս մեր · հեղմամբ Արեան սորա աղաչեմք ըզքեզ հանգո զհոգիս մեր նընջեցելոցն ։

Ս · Օրհնեա Տէր ։

Ք · Ընդ որս և մեզ այց արասցես բարերար Աստուած աղաչեմք ։

Դ · Յիշեա Տէր և ողորմեա ։

Ք · Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու և" ։

Դ · Յիշեա Տէր և ողորմեա ։

Սարկաւագն յաջակողմ սեղանոյն հնչեսցէ ։

Ս · Առաքելոց սբ՛բոց · Մարգարէից · Վարդապետաց · Մարտիրոսաց · և ամենայն Հայրապետաց սբ՛բոց · Առաքելազործ եպիսկոպոսաց · երիցանց · ուղղափառ սարկաւագաց · և ամենայն սբ՛բոց ։ Ընդեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ · Յիշեա Տէր և ողորմեա ։

Յարութեան հրաշալեաց պատ ։

Ս · Օ՛րհնեալ գովեալ և փառաւորեալ, հրաշալի և Աստուածազարդ յարութեանդն ՎԱՐԻՍՏՈՍԻ երկիրպագանեմք ։

Դ · Փառք յարութեան քո Տէր ։

Ի փոխն սրբոցն պատ ։

Ս · Սուրբ և Աստուածահաճոյ · Մարգարէին · Հայրապետին · Առաքելոյն · Մարտիրոսին · (այս անուն ·) որոյ այսօր զյիշատակն կատարեցաք ։ Ընդեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ · Յիշեա Տէր և ողորմեա ։

Ս · Ընդաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն սրբոց · Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն և Գրիգորի լուսաւորչին ։ Ընդիստակիսի Վարդանիսի · Յուսկանն · Գրիգորիսի · Ներսիսի · Սահակայ · Դանիէլի · և Խաղայ · Մեսրովպայ Վարդապետին · և Գրիգորի Նարեկացւոյն · և Ներսիսի Կլայեցւոյն · Յովհաննու Որոտնեցւոյն · և Գրիգորի և Մովսիսի Տաթևացեացն · և սրբոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց · Հովուաց և Հովուապետացն Հայաստանեայց ։ Ընդեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ ա-

ղաչեմք ։

Դ. Յիշեա Տէր և ողորմեա ։

Ս. Մինանձնացելոց սրբոց. առաքինասէր և Աստուածուսոյց կրօնաւորացն. Պողոսի. Անտոնի. Պողայ. Մակարայ. Ոնոփրիոսի. աբբայ Մարկոսի. Սրապիոնի. Նեղոսի. Արսենի. Եւագրի. Պարսամայ. Յովհաննիսեանց և Սիմէոնեանց. սրբոց Ոսկեանց և Սուքիասանց. և ամենայն սրբոց. հարց և աշակերտելոց Նոցին ընդ տիեզերս։ Լուղեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ. Յիշեա Տէր և ողորմեա ։

Ս. Թագաւորաց հաւատացելոց սրբոց. Աբգարու. Կոստանդիանոսի. Տրդատայ. և Թէոդոսից. և ամենայն սուրբ և բարեպաշտ Թագաւորաց և Աստուածասէր Իշխանաց։ Լուղեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ. Յիշեա Տէր և ողորմեա ։

Ս. Ընդհանուր ամենայն հաւատացելոց. արանց և կանանց. ծերոց և տղայոց. և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ 'ի ՔՐԻՍՏՈՍ ննջեցելոցն։ Լուղեցի յիշատակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ. Յիշեա Տէր և ողորմեա ։

Ս. Օրհնեա Տէր ։

Ք. Լուս առաւել զեպիսկոպոսապետն" ։

Ս. Պոհուութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր. վասն սուրբ և անմահ պատարագիս որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս. զի սա մեզ 'ի սրբութիւն կենդանութեան պարգևեսցէ։ Սովաւ շնորհեա զսէր զհաստատութիւն և զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց. եպիսկոպոսապետին մերոյ և պատուական Հայրապետին ամենայն Հայոց տեառն (այս անուն.) և մերոյ արհի եպիսկոպոսին և երջանիկ բաբունապետին տեառն (այս անուն.) և քահանայիս որ զպատարագս մատուցանէ։ Լու վասն զօրութեանց և յաղթութեանց Թագաւորաց Քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից։ Ողջախոհութիւն և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց։ Լուս առաւել վասն հանգուցեալ բաբունապետացն մերոց. և հաստատողաց Դպրատանց. և շինողաց սուրբ եկեղեցւոյս. և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ։ Ողջատութիւն երբարց մերոց գերելոց և շնորհ առաջիկայ ժողովրդեանս։ Հանգիստ հաւատով և սրբութեամբ 'ի ՔՐԻՍՏՈՍ կատարելոցն։ Լուղեցի յիշա-

տակ 'ի սուրբ պատարագս՝ աղաչեմք ։

Դ. Ըստ ամենայնի. և յաղագս ամենեցուն ։

Ս. Օրհնեա Տէր ։

Ք. Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ ։

Դ. Եւ ընդ հոգւոյդ քում ։

Ե՝ ողորմութիւն խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Ս. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք ևս առաւելապէս զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Վասն մատուցեալ և Աստուածային պատարագիս որ 'ի վերայ սրբոյ սեղանոյս զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Որպէս զի Տէր Աստուած մեր որ ընկալաւ զսա 'ի սուրբ երկնային և յիմանալի իւր մատուցարանն զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն սրբոյ զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Ընկալ կեցո և ողորմեա. և պահեա

զմեզ Տէր քոյին շնորհիւդ ։

Դ. Կեցո մեզ Տէր քոյին շնորհիւդ ։

Ս. Զամենասրբուհի զԱստուածածինն զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք ։

Դ. Տէր ողորմեա ։

Ս. Զանձինս մեր և զմիմեանս. Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք ։

Դ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք ։

Ս. Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր. ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ։

Դ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա ։

Ս. Օրհնեա Տէր ։

Ք. Եւ տուր մեզ համարձակաձայն բար" ։

Դ. Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի ։ Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր ։ Եւ թող մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա 'ի չարէ ։

Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օ՛հ քո է արքայու՞։ Խաղաղու՞։
Դ. Լու ընդ հոգւոյդ քում։
Ս. Ստուծոյ երկրպագեսցուք։
Դ. Ռաջի քո Տէր։

Քահանայն խոնարհի. և ամենայն ժողովրդոյն խոնարհեն 'ի վայր։ Ե՞ Սրբո՞ւն յայնէ։

Ս. Օրհնեա Տէր։
Ք. ՎԱՐԻՍՏՈՍԻՒ ՅԻՍՈՒՍԻՒ Տերամբ մերով՞։

Ե՞ Սրբո՞ւն յայնէ էարէր։

Ս. Պրոսխու�։
Ք. Ի սր՛բութիւն սրբոց։
Դ. Մի՛այն սուրբ. միայն Տէր. ՅԻՍՈՒՍ ՎԱՐԻՍՏՈՍ 'ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն։
Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օրհնեալ Հա՛ՅՐ սուրբ Աստուած Ճըշմարիտ։
Դ. Ա՛մէն։
Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օրհնեալ ՈՐԴԻԴ սուրբ Աստուած Ճըշմարիտ։
Դ. Ա՛մէն։

Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օրհնեալ Հո՛ԳԻԴ սուրբ Աստուած Ճըշմարիտ։
Դ. Ա՛մէն։
Ս. Օրհնեա Տէր։
Ք. Օրհնութիւն և փառք Հօր և Որ՛։
Դ. Ա՛մէն։ Հա՛ՅՐ սուրբ. ՈՐԴԻԴ սուրբ. Հո՛ԳԻԴ սուրբ։ Օրհնութիւն Հո՛Օր և՝ ՈՐԴԻՈՅ և սրբոյ Հո՛ԳԻՈՅՆ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։
Ս. Օրհնեա Տէր։
Ք. Ի սուրբ 'ի սուրբ պատուական՞։

Ե՞ խաչակնքէ քահանայն ոչխարն 'ի վերայ ժողովրդեանն և դառնայ 'ի ա՞ռաջն սեղանն, և փարեն զվարագոյրն։ Ե՞ ապա ասէ Տէր ողորմեա։

Սուրբ պատարագ Հա՛ՅՆ կենաց.
Ողորմութեան մեզ դուռն բաց.
Խոստովանիմք ՎԱՐԻՍՏՈՍ Աստուած.
Փրկեա զաշխարհս 'ի փորձանաց։
Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Ընի Աստուած հարցն մերոց.
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հաս օգնութիւն ծառայից քոց.
Լեր օգնական ազգիս Հայոց։ Տէր ողորմ"։

Երդ անկանիմք առաջի քոյ.
Պոչեմք մեղայ Տեառնդ մերոյ.
Պարցո՛ 'ի մէնջ ցասումն քո.
Զասն անսպառ գթութեան քո։ Տէր ողորմ"։

Օ՛ի գիտացաք մեք հաւաստեաւ.
Որչափ մեղայ մերոց լցաւ.
Ուստի Տէրդ մեր բարկացաւ.
Ընդ 'ի խրատել զմեզ զարթեաւ։ Տէր ողորմ"։

Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն.
Յմենասուրբ Երրորդութիւն.
Տուր աշխարհի խաղաղութիւն.
Եկեղեցեաց հաստատութիւն.
Զհահանայից զգաստութիւն.
Ժողովրդոց զարձ և զղջում.

Հեռաւորաց յաջողութիւն.
Եւ նաւորդաց անդորրութիւն.
Եւ հիւանդաց առողջութիւն.
Ընչեցելոց արքայութիւն.
Եւ մեր մեղացս թողութիւն։ Տէր ողորմ"։

Զբրիստոս յարեար 'ի մեռելոց.
Լոյս ծագեցար արարածոց.
Սուրբ յարութեամբ քո կենարար.
Յարո՛ զմեզ 'ի կեանս անմահ։ Տէր ողորմ"։
Ս. Սուրբ պատարագիս միջնորդութիւն։
Դ. Յիշեա՛ Տէր և ողորմեա՛։

Ե՝ ՈՂՈՐՄԵԱ՛ ՏԷՐ ԵՂՈՒՆԿՆ։

Ս. Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերոյ՝ գպիրք ձայնիւ քաղցրութեամբ զերգըս հոգևորս։ Օ՛ի սմա վայելեն սաղմոսք և օրհնութիւնք. ալէլուիա և երգք հոգևորք։ Պա՛շտօնեայք հանդերձ երգով սաղմոս ասացէ՛ք. և զՏէր յերկինս օրհնեցէ՛ք։

Ե՝ ԴՊԻՐՔՆ ԵՂՈՒՆԿՆ։

Դ. Զբրիստոս պատարագեալ. բաշխի 'ի

միջի՝ մերում. Ալէլուիա։

ԶՄԱՐՄԻՆ իւր տայ մեզ կերակուր և սուրբ ԶՄՐԻՒՆՆ իւր ցողէ՝ 'ի մեզ. Ալէլուիա։

Մատիք առ Տէր և առէք ըզլոյս. Ալէլուիա։

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր Ալէլուիա։

Օրհնեցէք ըզՏէր յերկինս. Ալէ"։

Օրհնեցէք ըզնա 'ի բարձունս. Ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք՝ նորա. Ալէլուիա։

Օրհնեցէք ըզնս ամենայն զօրութիւնք նորայ. Ալէլուիա։

Ե- Դոդերոն երգեն ՀՏՈՂ ՅՈՐՀՐԴՈ-ՈՐ ԸՍՔ ՊՈՊՂՈՄՃԻ Ո-Ո-ՐՆ։

ՏԱՂՔ ԵՒ ԳԱՆՁՔ

ԸՍՏ ՊԱՏՀԱՃԻ ԱՒՈՒՐ

ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է Ծընընդեան աւետիս. Տեառըն մերոյ և յայտնութեան աւետիս. Այսօր արևն արդարութեան աւետիս. երեւեցաւ 'ի մէջ մարդկան աւետիս։ Այսօր սուրբ կոյսն անապական աւետիս. Ծնաւ երեր զանմահ արքայն աւետիս։ Այսօր հրեշտակք յերկնից իջին աւետիս. ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն աւետիս։ Այսօր դըժոխքն սարսեցան աւետիս. գունդքն դիւաց յոյժ տրտմեցան աւետիս։ Այսօր չարքն կարգեցան աւետիս. և Ադամեանք ուրախացան աւետիս։ Այսդ մի պայծառ և պատուական աւետիս. երևեցաւ 'ի Հնդկաստան աւետիս։ Մեծ թագաւորք ժողովեցան աւետիս. յոլով դպիրք և շատ իշխանք աւետիս. Աստղն տեսին և զարմացան աւետիս. շատ քննեցին և չիմացան աւետիս։ Մովսէս արի տես զՍինա աւետիս. և զմորենին որ անկէզ կայր աւետիս։

Ցնծա՛ ցնծա՛ Դաւիթ արքայ աւետիս. հրեշտակք զքնարն քո և խայտա՛ աւետիս։ Օրհնեցեր նախագուշակ աւետիս. կատարեցաւ յոյժ գերունակ աւետիս։ Եկէ՛ ի Սաբայ և յԱրաբայ աւետիս. սուրբ պատարագ բերցեն նմա աւետիս։ Ահա երեք արքայ եկին աւետիս. որ երեքեանքն անուանին աւետիս։ Մելքոն, Գասպար և Պաղտասար աւետիս. որք ՝ի Սաբայ և յԱրաբայ աւետիս։ Ոսկի, կնդրուկ և Զմուռս նմա աւետիս. ունին երեք աղնիւ ընծայ աւետիս։ Ոսկին զպատիւն արքայական աւետիս։ Կնդրուկն ըզզարդ Աստուածութեան աւետիս։ Զմուռսն որ էր անապական աւետիս. նշան թաղման և յարութեան աւետիս։ Երկոտասան հազար էին աւետիս. Յերուսաղէմ քաղաք մտին աւետիս։ Ամէջ աստեղ կոյսն տեսին աւետիս. ունէր զմեր Տէրն ՝ի գրկին աւետիս։ Երուսաղէմ դղրդեցաւ աւետիս. երբ զորոտումն զայն լուան աւետիս։ Զչ հրեշտակն Աստուածային աւետիս. ասաց զպատճառն գալոյ նոցին աւետիս։

Մի երկնչիր տաճար բանին աւետիս. Երկրպագել գան միածնին աւետիս։

Ապա գարձան և յայրն եկին աւետիս. Ուր էր ծնեալ Աստուած Որդին աւետիս.

Այսօր հովիւքն անբան հօտին աւետիս։ Ընդ հրեշտակաց զՏէրն օրհնեցին աւետիս։ Ունէին զգառն երկնային աւետիս. Ընմահ գառին ընծայ բերին աւետիս։

Ով զարմանելի խորհուրդ այս մեծ յայտնեալ արարիչն Աստուած ՝ի Յորդանան եկեալ։ Կամէր մկրտիլ ՝ի ծառայէն իւրմէ. չառնոյր Եարապետն զմկրտիլն ՝ի յանձն։ Յորդանան լըեալ փախըստական դառնայր. վըտակ առ վտակ պատգամաւոր լինէր։ Գոետ մի զարհուրիր, քոյ արարիչն եմ ես. եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս։ ՅԻՍՈՒՍ յառաջեաց Աստուածութեամբն ՝ի ջուրն հանդերձ Յովհաննու, ՅԻՍՈՒՍ ՝ի գետն եմուտ։ Երկինք պատառեալ. ձայն ՝ի յերկնից իջեալ. ձայն հօր ՝ի բարձանց որ վկայեաց Որդւոյ։ Դա՛ է իմ Որդի ընդ որ հաճեցայ ասէր. դըմա լուարո՛ւք որդիք աւազանին։ Սուրբ հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ. յայտնէր ցուցանէր փառակից հօր զՈրդին։ Երդ օրհնեալ է հայր և համագոյ Որդին։ Հոգւոյն Ճշմարտի փառք յաւիտեանս. Ամէն։

Այսօր ձայնը Հայրական յերկնից իջեալ հաճոյական. սիրեցելոյ Որդւոյն վրկայ. «Այս յորդորէ զետ յորդորէ զետ Յորդանան. աւետաւոր ձայնիւ երգէր մեծ կարապետն Յովհաննէս։ Այսօր սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ, և նիւթեղէն հրեղէն լեզուօք յայտնեալ 'ի քեզ սուրբ Յորդանան. «Այս յորդորէ»։ Այսօր ցնծացաւ Զաքարիաս քահանայուք և զուարճացան եկեղեցիք հեթանոսաց. «Այս յորդորէ»։ Այսօր կարապետն Յովհաննէս խայտայր ցնծայր տեսանելով զԱստուած Որդին իջմամբ 'ի Ջուրն. «Այս յորդորէ»։

Հրճուիմք այսօր մեք հոգեպէս. տօնիւս մաքուր սուրբ կուսական. զի ծնաւ Փրկիչ մեզ Տէր ՎՐԻՍՏՈՍ. որդի Դաւթի Աբրահամու։ Աւետիս քեզ հայր մեր Ադամ. աւետիս քեզ մայր մեր Եւայ. աւետիս դուստրը Եւայի կոյս Մարիամ։ Դրեմ դրախտին դուռն բացաւ. ծառն կենաց նոր տնկեցաւ. պտուղ ծառոյն որ մեզ տուաւ. ՎՐԻՍՏՈՍ տղայ մանուկ ծնաւ՝ աւետիս արքայ Դաւիթ. աւետիս քեզ հայր սուրբ Յովսէփ. աւետիս մաքուր Կուսին. մայր սուրբ Աննա։

Խնդան հոգւով սուրբ նահապետքն. և զուարճանան սուրբ մարգարէքն. զոր ասացին կատարեցաւ. Աստուած յերկրի երևեցաւ, աւետիս ձեզ մեծ նահապետք. աւետիս ձեզ սուրբ մարգարէք. աւետիս քեզ երջանիկ մայրդ Սառայ։



ՏԵԱՌՆ ԸՆԴ ԱՌԱՋԻ

ՎՐԻՍՏՈՍ փառաց թագաւորն, այսօր երկեալ յընծայումն. կատարելով նա զօրէնս, քառասնօրեայ գալստեամբն. յերուսաղէմ քաղաքին, առ Սիմէոնն ծերունին։ Ընդքառ երկիւ գալստեանն, և ահագին որոտման. տարփողելով ծերունին. ձայնէր 'ի մէջ տաճարին. զոր մարգարէն Եսայի. յառաջագոյն գուշակեալ։ Օրհնեալ, զարթեալ դու զարթեալ, յերուսաղէմ դու զարթեալ, ուրախութեամբ ցնծութեամբ, զմանկունս քոյ դու զարթո։ Մեծապայծառ ցնծութեամբ։ Փրկչին երևեալ ընդ յառաջ. Տաճարապետն ՎՐԻՍՏՈՍ, այսօր երկեալ 'ի տաճարն։ Աստուածային հրամանաւն, կայր ծերացեալն Սիմէոնն. ոչ տեսանել նա զմահ, մինչ տեսցէ իսկ զօծեալն։ Ի գիրկս առեալ Սի-

մէոնի, զԱստուած Որդին և ասէր։ արդ արձակեա՛, արձակեա՛, Տերս 'ի կապից արձակեա՛. արդ արձակեա՛ արձակեա՛, Տերս 'ի մեղաց կապանաց։ Արդ արձակեա՛, արձակեա՛, Տերս 'ի կապից օրինաց։ Արդ արձակեա՛, արձակեա՛, Տերս 'ի մարմնոյս կապանաց։ Արդ արձակեա՛ ազատեա՛, Տերս 'ի մեղաց ազատեա՛։ Մեծ աւետիք են այսօր, տիեզերաց աշխարհի. մեծ աւետիք են այսօր, Քրիստոնէից ամենի։ Մեծ աւետիք են այսօր, Ժողովրդեան ամենի. մեծ աւետիք են այսօր, Նախաստեղծին ադամայ։ Մեծ աւետիք են այսօր, մեր Նախամօրն. Եւայի. մեծ աւետիք են այսօր, Նահապետացն ամենի. մեծ աւետիք են այսօր։ մարգարէիցն ամենի. մեծ աւետիք են այսօր, Աստուածահօրն Յովսեփայ։ Մեծ աւետիք են այսօր, Մարիամու սուրբ կուսին. մեծ աւետիք են այսօր, Երուսաղէմ քաղաքին։ Մեծ աւետիք են այսօր, Սողոմոնի տաճարին. մեծ աւետիք են այսօր, Սիմէոնի Տերունւոյն։ Մեծ աւետիք են այսօր, Թագաւորաց աշխարհի. մեծ աւետիք են այսօր, քահանայից ամենի։ Մեծ աւետիք են այսօր, սարկաւագացն ամենի. վասն զա՛ լոյն ՎԱՐԻՍՏՈՍԻ՝ այսօր 'ի սուրբ տաճարին։ Յիշեցաջոր Թագաւոր՝ օրհնեալ գալուստ քո

այսօր։ Յիշեցաջոր արարիչ՝ և 'ի մեղաց ազատիչ։ Արդ ազատեա՛ և զմեզ, Տէր 'ի մեղաց կապանաց։ Աղաչանօք մօր քոյին, Մարիամու սուրբ կուսին. և Սիմէոնի Տերունւոյն. և Աննայի սրբուհւոյն։ Լո՛յծ զմեղաց մեր կապանս, և ազատեա՛ յանցանաց։ Զի արժանի եղիցուք, յաւուր մեծի գալստեանն. խառնիլ 'ի դասս արդարոցն, քեզ փառս տալ ընդ սրբոցն։

Գալուստն որ եղեալ. Աստուծոյն բարձրեալ. և փառաւորեալ։ Տէրն որ մարդացեալ. հին աւուրցն եղեալ. Աստուած մանկացեալ՝ նա այսօր եկեալ. և դուռն բացեալ. որ վաղուց փակեալ։ Լու նշան տըւեալ. թէ ոչ ոք մտեալ. յայն դուռն և ելեալ։ Բայց Աստուած բարձրեալ. նա որ մանկացեալ. և տղայացեալ. Այսօր նա եկեալ. զուխտն կատարեալ. զխոստումն լըցեալ։ Հաղաք սասանեալ. և զահի հարեալ. նաև դղրդեալ։ Զի նսեմացեալ. երեկոյացեալ. յորժամ Տէրն եկեալ։ Լոյն գրոհ տըւեալ. և ջահս վառեալ. և 'ի դուրս եկեալ։ Լապտերօք վառեալ. և ջահիւք լուցեալ. ամբոխն շարժեալ։ Որոց

հիացեալ. և զահի հարեալ. ամբոխն սարսեալ։ Իրերաց հարցեալ. Տէրն ընդ առաջեալ. և ընդ որ եկեալ. ահա կեցո։

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ

Սէրըդ խոնարհեալ. սիրով մարդացեալ. սէր մեզ աւանդեալ։ Օրհնեալ դու գովեալ. Աստուած մարմնացեալ. 'ի տաճարն եկեալ։ Մանկունք պարառեալ. երգ յաղթանակեալ. և ճոճանակեալ։ Սիոնն զայս տեսեալ. դստերն աւետեալ. ուրախ լեր բերկրեալդ։ Փեսայն քո եկեալ. քեզ պսակ բերեալ. և քոյդ քեզ արկեալ։ Հարսն պերճացեալ. դշխոյ զարդարեալ. ընդ առաջ եկեալ։ Լու զկնի դարձեալ. օրհնութիւնն տուեալ. անուան քում բարձեալ։ Լու փառաւորեալ. գոհութիւնս երգեալ. և երկրպագեալ։ Փրկչիդ որ եկեալ. զի զմեզ վերառեալ. և յերկինս հանեալ. յաջմէ կացուցեալ. ողորմեա։

ՎԻՐԻՍՏՈՍ Որդի Տէրն փառաց. մարդն

'ի կուսէն ծնեալ աստուած։ Աստուածն Բանն հօր փառաց. հրաշագործողն յերկնից բարձանց։ Որոյ Քրովբէքն աթոռ փառաց։ Նստաւ 'ի նոր իւր արարած։ Լու զոր օրհնեն դասք հրեշտակաց. գովեն մանկունքն ըստնդեսց։ Նստաւ 'ի յէջ և յաւանակ. կրկին ազանց գոլ օրինակ։ Լոշն օրինակ հրէից ազգաց. և յաւանակն հեթանոսաց։ Ամն օրինօք զգօնացաւծ. ոմն տրմուղ զհետ կամաց։ Յորս բազմի Բանն Աստուած. հոգին մաքուր երկուս ազգաց։ Որպէս զվէմ անկեան քարանց. միացուցիչ երկուց կողմանց։ Ուստի ծառոց բերեալ ծերոց. 'ի ձիթենեաց պարարելոց։ Ուրմաւենի բերեալ տղայոց. 'ի բարձրութեան ձև արդարոց։ Ընդ առաջ ելեալ ձայնիւ երգոց. Տեառն արարչին արարածոց։

ՑԱՐՈՒԹԵԱՆ

Օրքն երկնային իջեալ 'ի բարձանց։ տան աւետիս այսօր աշխարհի։ Յարեաւ Աստուած կեանքն ամենայնի. յոյս յարութեան մարդկային ազգի։ Յարեաւ ՎԻՐԻՍՏՈՍ օծեալն 'ի մարմնի. Աստուածու-

թեամբն անբաժանելի։ Յարեաւ ՅԻՍՈՒՍ փրկիչն աշխարհի. և աղատեաց զգերեալսն 'ի բանտի։ Յարեաւ փեսայն 'ի մէջ գիշերի։ յառագաստէ նոր գերեզմանի։ Յարեաւ արքայն երկնի և երկրի. 'ի զահոյիցն Երուսաղէմի։ Յարեաւ հովիւն քաջ և բարի. կոչ առնելով իւր փոքրիկ հօտի։ Յարեաւ եդեալն 'ի գերեզմանի. յարոյց զԱդամ ձեռագործն նախնի։ Յարեաւ կոչեալն յաւուր երրորդի. 'ի կիւրակէ աւուրս Տէրունի։ Յարեաւ մեռեալն որ միշտ կենդանի. այն որ արար զփրկութիւն երկրի։ Յարեաւ կենաց հատն ցորենի. բազում արդիւնս եղև աշխարհի։ Լուրախացեալ մանկունք Սիոնի. յօրս այս զատկի սուրբ կիւրակէի։ քեզ օրհնութիւնս տացուք համաձայն. ընդ հրեշտակաց դասուցն ամենայն։

Իմանալի լոյսն այսօր ծագեաց. զխաւար մեղաց մերոց փարատեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ զդժոխս աւերեաց. և զարգելեալ հոգիսն աղատեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ, զգերեալսն փրկեաց. զգիր պարտեաց մեղացն քաւեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ, զԱդամ նորոգեաց. և յառաջին փառսն հրա-

ւիրեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ մեզ կեանս պարգևեաց. զզօրութիւն մահու խափանեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ փեսայն մեր փառաց. զգեցոյց և զմեզ հանդերձ հարսանեաց։ ՎՐԻՍՏՈՍ յարեաւ Աստուածն բարձանց. զմեզ անվախճան փառօք պսակեաց։ Օրհնեալ անճառ կամք Աստուածային. որ գըթացաւ յազգս մարդկային։



Գալով ողբային. կանայք սիրելին. ՅԻՍՈՒՍԻ Փրկիչն։ Լուղս անոյշ բերին. 'ի խընկել զմարմին. Աստուծոյ Բանին։ Լու տեսանէին. զտեսիլ հրեշտակին. նստեալ 'ի վիմին. Զայնէր առ նոսին. զի լայք տրտմագին. զՅԻՍՈՒՍ միածին։ Յարեաւ կենդանին. յարեաւ սքանչելին. յարեաւ հաւատին։ Տեսէք զտեղին. զոր աստ թաղեցին. զխաչեալ կենդանին։ Լրթայք առ վիմին. աւետիք նմին. և եղբարց նորին։ Մոռուլ զտրտմութիւն. երթալ 'ի լերին. 'ի Գալիլեային. Յանկարծ երևեալ. 'ի միջի կացեալ. և ողջոյն տուեալ։ Զձեռսն ցուցեալ. զկողն բացեալ. զոր տիգաւ խոցեալ։ Ի նոսա փրչեալ. զՀոգին սուրբ տուեալ. իշխանս կացուցեալ։

Յարեաւ կենդանին՝ բաբուն երկնային՝
լոյսն անքննին։ Խսկակից Որդին՝ իջեալն
'ի ստորին՝ բանտ խաւարային։ Յարեաւ
հրաշալին՝ 'ի գերոյ ներքին՝ խորոցն ան-
գնդին։ Զատեալ զնոսին՝ զորս անդ էին՝
'ի գերոյ խաւարին։ Յարեաւ սքանչելին՝
ՅԻՍՈՒՍ միածին՝ անմահ կենդանին։ Յա-
ւուր երրորդին՝ միաշաբաթին՝ 'ի սուրբ
կիւրակէին։ Յարեաւ 'ի խորին՝ ժամ ա-
ռաւօտին՝ 'ի մէջ գիշերին։ Յարոյց իւրո-
վին՝ զքնութիւն մարդկային՝ 'ի կեանս վե-
րըստին։ Թագաւոր անմահ՝ բազմեալ իսկ
'ի գահ՝ յանձն առեր զմահ։ Ի մահուն ան-
մահ՝ կոխելով զմահ՝ տալ մեզ կեանս ան-
մահ։ Պոլով քո անմահ՝ անպարտ առ 'ի
մահ՝ խավանել զմահ։ Լստելով 'ի գահ՝
անդորր և անմահ՝ հանուրց վերնգահ։ Օ՛ին-
ուրոցն 'ի պահ՝ կանանցն անմահ՝ կային բաշ-
կայ։ Պետն ձայնեաց զանմահս՝ զի խնդրէք
դուք մահ՝ զկենդանին անմահ։ Պահ ան-
մահս 'ի մահ՝ տալով զկեանս անմահ՝ մեզ
փառս առաջագահ։ Ահա կեցո՛ զմեզ Տէր։

Յարեաւ արքայն երկնային. եղեալն 'ի-
գերեզմանին. իջեալ յերկնից հրեշտակին.

տայր աւետիս մարդկային։ Յարեաւ խաչ-
եալն 'ի փայտին. խոցեալ ձեռամբ զինուո-
րին. մի լայք կանայք տրտմագին. մեռեալ
ՅԻՍՈՒՍ կենդանին։ Յարեաւ եղեալն 'ի-
տանան. անմահ և անապական. յաղթեաց
մահու բռնութեան. փրկեաց զգերեալն
ամենայն։ Յարեաւ և զմահ կործանեաց.
զիշխան մահու ըմբռնեաց. յոյս յարութեան
պարգևեաց. մեզ յանիծից ազատեաց։
Յարեաւ մարմնովն նորն Ադամ. յարոյց
ընդ ինքեան հինն Ադամ. որով ցնծայ
յարաժամ. յաղքատ բնութեան լեալ փար-
թամ։ Յարեաւ 'ի մէջ գիշերին. լուսա-
տուն ամենայնի. ՅԻՍՈՒՍ միածին Որդի.
'ի հօրէ ամենակալի։ Յարեաւ 'ի կընքեալ
վիմէ. ծնեալ 'ի կոյս յարգանտէ. զաշա-
կերտսն ուրախ առնէ. 'ի քարոզել յուղարկէ։
Յարեաւ յոյսն արարածոց. յարու-
թիւն համայն հոգւոց. արքայն հրեղինաց
վերնոց. և Տէր ամենայն ընչոց։ Սաստիկ
հիացմամբ իջեալ. հրեշտակն 'ի վիմին բազ-
մեալ. ահաբեկ եղեն սարսեալ. պահա-
պանքն որպէս մեռեալս։

Մեծ հառաչանօք եկին. յայն առաւ-

տին. կանայք 'ի գերեզմանին. խնկել զմարմինն։ Կանայքն յերկիւղէն հրէից ողբալ չէին խէին. հանդէպ սուրբ գերեզմանին դառն արտասուէին։ Բամք զինուորական դասուն առ գերեզմանին. յահէ հրեշտակապետին անկեալ թմրէին։ Տեսին զլուսափայլ հրեշտակն 'ի վերայ վիմին. փող աւետաւոր հնչէր որդւոց մարդկային։ Ո՞վ կանայք, ուրախ լերուք, զի՞ լայք զկենդանին. թաղեալն յարեաւ փառօք 'ի մէջ գիշերին։ Տեսէք զգերեզմանն ունայն. այն սուրբ մեռելին. զկտաւն և թափուր ծալեալ 'ի վիմափորին։ Մարիամ տեսեալ զՅԻՍՈՒՍ 'ի մէջ պարտիզին. ողբալով ձայնէր առնա, ո՞ւր է իմ որդին։ Տէրն պատասխան առնէր մօրն իւրոյ կուսին. խօսելով ընդ նա բառնայր ըզտրտմութիւն սրտին։ Ո՞վ դու Մարիամ, ընդէ՞ր լաս կողկողակին. ես եմ վարդապետն Յիսուս խաչեալն 'ի փայտին։ Յիս մի՛ մերձենար, ասէր դուստր կողաց՝ին. գնդին Պետրոսին պատմեա՛ զտեսիլդ ահագին։ Օ՛լ 'ի Գալիլեա երթալ անդր ժողովին. անդ տեսանիցեն ըզիս՝ և ուրախ լինէին։

Դասքն հրէական էին. պահապան սուրբ գերեզմանին. յոր եդաւ մարմինն անմահ։ Դահանայքն չար. եղին զմատնեհար. եթէ անհնար որ չըկայր գողանալոյ ճար։ Իւղաբերքն եկին. զխունկս անոյշս բերին. ողբալով լային. պարառեալ շուրջ զգերեզմանաւն։ Տեսեալ ահագին, զհրեշտակն 'ի վիմին, որ ձայնէր նոցա. զի՞ խնդրէք զմեռեալ կենդանին. Դարձան և եկին կանայք սիրելիք. աւետիս տային Պետրոսին և ընկերաց նորին։ Զեզ աւետիս յարեաւ կենդանին. Յիսուս միածին, զոր անմեղ վիրաւորեցին։ Յարուցեալ վիմին. Սիմոնն Պետրոսին. Յովհան սիրելին փութապէս անդ հետևեցին։ Մտեալ Պետրոսի 'ի գերեզմանին. տեսեալ զարմանայր զվարշամակն առանց մեռելին։ Աշակերտն Յովհան որդին Որոտման. տեսեալ զվարշամակն և զկըտաւն 'ի մարմնոյն ունայն։ Դարձան և գնացին անդ ուստի եկին. բայց Մարիամու անդ կացեալ լայր ողբմագին։ Զայն բարձեալ նորին Մագդաղենացին. տեսեալ զմիածին կեցեալ 'ի մէջ պարտիզին։ Ով պարտիզպան ասա՛ ուր տարան զՅԻՍՈՒՍ կենդանին. զոր կարծեմ թէ դու ես նման։ Մի՛ լայր ո՛վ դու կին, ես եմ միածինն. Ե՛կ և տես զտեղին, զոր խոցեաց ազգն Ի-

բայէլին։ Մի լայր ցաւագին, յարեաւ կենդանին, մեռեալն 'ի խաչին. զոր աստէն գերեզման եդին։ Դարձիր և ասա Պետրոսին որ գայ. զմեր Տէրն տեսաք. որ գնաց 'ի Գալիլեա։

Երբ Եսայի բարձրաձայն գոչեա. ելէք որ կապեալք խաւարէս յայտնեալք։ Օ՛ի Տէր Թագաւոր մեր Փրկիչ եկեալ. արիք մի յամէք 'ի խոր խաւարիդ։ Յովնան նախատիպ տես զՀշմարիտդ. որ զքեզ ազատէ 'ի նեղութենէդ։ Յովէլ բախացիր որ զվայն կրկնեցեր. պարուք ընտրելոցդ Ամովս ցընծացիր։ Երդ ցանկալի Դանիէլ խնդայ. որդիդ գերութեան գերողս հրակերպիցն։ Երանեալ մանկունք սուրբ Անանիեանք. որ հրով փորձեցաք և յաղթող գտաք։ Յովհաննէս եկեալ յառաջ կարապետ. տես զմեղաց բարձող Գառն քո ցուցեալ։ Դունդք ժողովեցէք ընդ իւր վերացիք. խաչիւ փրկեցաք, տեսէք զայն 'ի ձեռս։ Յաղթող 'ի մարտի ունիք Թագաւոր. որ դատապարտեաց զձեր զկապողն։ Եւ զձեզ ազատեաց 'ի չար կապանաց. փառս տացուք նմա որ զայն ներգործեաց։ Տէրն մեր յարուցեալ

փառօք վերացեալ. որում գոհութիւն այժմ և հանապազ։

Գոչէր հրեշտակն առ վիմին. վասն յարութեան ՅԻՍՈՒՍԻՆ. կանայք դուք զի զարհուրիք. լալով խնդրէք զկենդանին։ Բաբուն յաթոռ հօր բազմեալ. նա 'ի խաչին բարձրացեալ. որպէս զմարդ ծարաւեալ. դառն գինաւ զմայլեալ։ Ի տապանի տրքնեցաւ. արթուն ընուին ստացաւ. Աստ և մարդ ծանուցաւ մեզ փրկուի յայտնեցաւ։ Գովեալ գնդին Պետրոսեան. տալ աւետիս յարուցեալ 'ի Գալիլեա էր սահման. անդ էր եդեալ Տէր պահման։ Որ չար այսոցն սաստեաց. զիշխան մահու հալածեաց. զգերեալ հոգիսն ազատեաց. աւանդ բարեաց պարգևեաց։ Բաբունք բանին հաւատով. փութացարուք մեծ յուսով. զՏէրն տեսէք անդ սիրով. մխիթարէ զձեզ հոգւով։

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այսօր անդրանիկ հօր միածին Որդին.

յերկինս սրլանայ Ադամային կերպիւ։ Լ՝ե-
եալ 'ի բարձունս գերեաց զգերութիւն. առ-
եալ զաւար բաշխեաց պարգևս մարդկան։
Օրհնեալ արդարոց ընտրելոց պարուց. ա-
ծեալ 'ի յերկինս 'ի յոթևանս հօր։ Աքան-
չացեալ վերնոց հողեղինաց զուարթնոց. ա-
սէին ցմիմեանս, ո՞վ է արքայդ փառաց։
Պոչեալ ստորայնոց առ բարեպանս դրանց.
համբարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր.
Սա ինքն է հզօր տէր. թագաւոր փառաց։
Հզօր զօրութեամբ կարող 'ի պատերազմի.
ելեալ եդովմայ. գայ մտանէ 'ի փառս. հար-
եալ զհընձան. ներկեալ զծիրանին։ Պստի
ընդ աջմէ Աստուծոյ հօր իւրոյ. գոլով է-
ակից. և համագոյ նմին։

ՀՈԳԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Պէր օրհնեալ գովեալ. և փառաւորեալ.
Աստուած դաւանեալ. հոգիդ կատարեալ։
Յարարածս հեղեալ. պարգևս բաշխեալ.
Սարգարէան աղդեալ. զապագայն պատ-
մեալ։ զՊրդւոյն մարմնացեալ. 'ի հօրէ ծըն-
խեալ. Պրդւոյ առաքեալ. և առ մեզ ե-
կեալ։ Պերնատունն իջեալ. 'ի հրոյ երև-

եալ. լեզու բաժանեալ. յառաքեալս հան-
գեալ։ Օրութեամբ լցեալ. շնորհօք զար-
դարեալ. ահա առաքեալքն ընտրեալ։ Հո-
գիդ սուրբ առեալ. Աստուած քարոզեալ.
լեզուս խօսեցեալ. զորս ոչ էր ուսեալ։ Ինդ
նոսա եղեալ. յաւէտ մնացեալ. և զօրացու-
ցեալ. 'ի գործ յաջողեալ։ Ի շնորհս յա-
ճախեալ. արդիւնաւորեալ. վրկայք զօրա-
ցեալ. և նահատակեալ։ Զ՝ՀՐԻՍՏՈՍ դա-
ւանեալ. կուսանք ժուժկալեալ. և ողջա-
խոհեալ։ Սրբութեամբ կեցեալ. վարդա-
պետք վարժեալ. գիրս թարգմանալ. զայս
օգտեցուցեալ։

Ի մեծի աւուրս տօնիս Հոգիդ սուրբ. ի-
ջեալ յերկնից յերուսաղէմ քաղաքի. 'ինը-
ջան աւուր տեղի։ Պասք առաքելոց սրբոց.
պատուէր 'ի փրկչէն առին. նստիլ յերու-
սաղէմին. մինչ որ զգեցան զՀոգին։ Ի վեր-
նատան սուրբ սրահին. անդ էր ժողով մե-
տասանին. որք հրամանաւ Տեառն կային.
և սուրբ Հոգւոյն ակն ունէին։ Պյսօր սուրբ
Հոգին իջեալ յերկնից. Աստուած քարո-
զեալ. հրեղէն լեզուօք բաժանեալ. և 'ի
յառաքեալսն հանգեալ։ Պոհութիւն Հոգ-

ՀՈՅՆ ԿՐԲՈՅ. ՈՐ ԷՀ ՅԱՌԱՔԵԱԼՆ ԱՅՍՕՐ. ՀՐԱՇԻՒՔ ՀՐԱՁԻՆԵԱՑ ԶՆՈՍԱ. ԽՕՍԵԼ ՅԱՅԼ ԵՒ ՅԱՅԼ ԼԵԶՈՒՍ։

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Լեառն ցնծա՛ դու թափօր. յարփիւռելոյ տօնի. քան զԱինայ բարձրացար. զԱստուած փառօք ընկալար. զԱստուած փառօք ընկալար։ Երկնիցն դուռն տեսաք. յանթոռ փառաց զքեզ ծանեաք։ Հայր և Որդի աստ հանդէաւ. 'ի գլուխս քո փայլեցաւ. 'ի գլուխս քո փայլեցաւ։ Երինք ընդ քեզ խայտասցեն. երկիր և ծով պարեսցեն. քեզ երանի երգեսցեն. լեառն թափօր գոչեսցեն։ Ի քեզ խորան կառուցաւ. արքայ 'ինոյն բազմեցաւ. որոյ փայլումն փառաց. արեգակն յաղթեցաւ։ Անինայ և Սիոնն վերին. այսօր 'ի քեզ ձայնակցին. գլուխ օրինաց երկրին. Պետրոս և Մովսէս խօսակցին։ Լուռ որ 'ի քեզ հաստատեալ. պտուղ ախորժ ընծայեալ. օրհնութեամբ զանուն քո գովեալ. այժմ և յաւէտ յաւիտեան։

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ. քերեալ զբաբիոն պսակ յաղթող կուսին։ Այսօր կոչելով առ բոլորիցն Տէրն. զտաճար բարձրելոյն և զբնակարան բանին։ Այսօր հրաւիրմամբ Հոգւոյն. ժողովեցան դասք առաքելոցն և իմաստուն կուսիցն։ Այսօր խոնարհեալ անմարմնական դասուց. միածին Որդին առ կուսութեանցն մայր։ Այսօր աւանդեալ զմաքրական հոգին. փայլակնանըման վերհամբարձեալ վերհիցն։ Այսօր ամփոփեալ զսրբասնեալ մարմինն. ծածկելով յերկրի զանապական զգանձն։ Այսօր երկնայնոց խմբիցն պարառեալ. եղանակեին շուրջ զգերեզմանաւն։ Այսօր փոխադրեալ 'ի զգայական բնութեանց. զմարմինն մաքուր յիմանալի խորանս։ Այսօր ցնծութեամբ երկնաւորաց դասուց. համուրեկցեին կուսին երթալ յերկինս։ Այսօր շնորհեցաւ բժշկութեանց պարգև. պատկեր Տիրամօրն լուսազարդեալ յերկինս։ Այսօր երգս առեալ եղանակեմք ձայնիւ. կուսական տօնիւս երրորդութեան զփառս։

Սուրբ Աստուածածնի, կուսին անարատ, հարսին ցանկալի, զուարթնոցն գնդին։ Հրեղինաց դասին, Արեգակնափայլ դիմին, և բոլորեալ լուսին։ Պառվառ աստեղին, օդաձնաց թռչուն, զարմին սուրբ Սիրամարգին։ Ղաւնի ոսկի փետրին, մաքուր Տատրակին։ Դաջ և վայելուչ Արծուին. և բույն Բազային։ Ծիծռնաձիչող լեզուին, կարմրոտ կաքաւին։

ԽԱՉԻ

Մեհին գաւազան. փայտ կենդանութեան, սուրբ խաչ փրկութեան։ Դու ցուպ յաղթութեան. և Նոյեան տապան. առիթ փրկութեան։ Ո՞վ ծառ Սաբեկայն. խոյին կախարան. Սահակայն փոխան։ Անդուխք Յակովբեան. էջ հրեշտակական. ելք ազգի մարդկան։ Ղևիս աննման. ակն պատուական. և զէն ամրութեան։ Որով փրկեցան. ազգն Իսրայէլեան. և ազատեցան։ Հարկու նշան. զրոշմ զգայութեան. մանկան Մովսիսեան։ Դանին պատուանդան. գառին զենարան. պարծանք Պօղոսեան։ Օրհեղ պահապան. դու որդւոց մարդկան. որ ի քեզ յուսան։ Երկօք ձայնական. ծունր

աղօթական. երկրպագական։ Սուր անբըթական. և մեծ ախոյեան. անձանց պահպան։ Սուրբ հացին սեղան. որ կենանս մայ մարդկան. մեղաց քաւարան։ Ընկալ զերկրպագութիւն խաչիդ։

Կենաց փայտ տնկեալ. զքեզ տնկողին զեղեմ. զտնկագործն էից. 'ի քէն պտղաբերեցեր։ Ընհասին Սերովբէից. բոցեղէն թեւոց հողեղէն ընութիւնս. եղեր դիւրահաս պատճառ։ Դագաւորն երկնից. 'ի քեզ տարածմամբ. ձեռաց ժողովեաց. զհեռացեալսն ընդ թեւօք իւրովն։ Որ զկապ մահու ելոյծ. կապելովն 'ի քեզ. զկապից մեղաց, զմեզ արձակել հայցեաց։ Լեղւոյն դառնութեան. փոխան վանն իմ զոր էարբ դառնարար. վիժանք հոգւոյս քաղցրունք բղխեսցին։ Ի քեզ բեւեռմամբ. ձեռացն զիմն արձակեա. հեղիւսեալ ոտիւքն. ուղղեա զգնացս իմ յերկինս։

Ե՜ ապա Հորդէն զվերադարձն յետս։ Ե՜ Սրբոյ՝՝՝ գն Հարուղէ Երբէր ՀայՒ՝՝։

Ս. Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք։

Ե՝ ծողվե՝ ըզ՛ն նո՝ ոգն ֆոյնէ՝ ։

Դ. Ը՛ստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Ք. Կեցո՛ Տէր զժողովուրդս քո. և օրհ՚։

Ե՝ յորժամ հողըզ՛ն ոչ՝ ծանո՝ ոգ՛ն՝ Դողեր՛ն երգէն զՀ՝ ոգ՛ն՝ զայ։

Ռաշխէ՝ ԶՄԱՐՄԻՆՆ իւր և ԶԸՐԻԻՆ ընոր ուխտ անուանեալ. և յիշատակ կամաւոր մահուանն. մերձեցելոցս ՚ի նա սրբութեամբ։

Ո՛ր ՄԱՐՄՆՈՎ և Ը՚ՐԵԱՄԲ քո ցուցեր ըզթողութիւն մեղաց. որ ըմիշտ պատարագիս ՚ի մեզ անծախապէս. մաքրեա ՚ի մէնջ ը՚զմէգ խաւարին խորհրդոյ և լուսաւորեա զմեզ։

Ո՛ր քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քոյ. մահացելոցս ՚ի Ճաշակմանէ նախահօրն. մաք՚։

Ո՛ր կազմեցեր սեղան խորհրդոյ և արբուցեր յանմահական բաժակէն, սրբոց քոց առաքելոցն այսօր ՚ի սուրբ վերնատանն. ա՚ղաչեմք Փրկիչ ողորմեա՛։

Մաքրեա ըզմիտս և զխորհուրդըս զի և մեք հաղորդիցուք սրբութեամբ, ընդ սրբոց քոց առաքելոց այսօր ՚ի սուրբ վերնատանն. աղաչեմք Փրկիչ ողորմեա՛։

Ռան հօր և քահանայպետ Ճշմարիտ. որ զաշխարհակեցոյց Ը՚ԶՄԱՐՄԻՆ և ԶԸՐԻԻՆԸԴ քո բաշխեցեր յառաքեալսն. այսօր հաղորդին հողեղէնքս Աստուածային խորհրդոյդ. Որդի Աստուծոյ ողորմեա՛։

Ը՚այսօր վերըստին նորոգեցա՛ք ՚ի յանիծից նախահօրն. Ճաշակելով Ը՚ԶՄԱՐՄԻՆ և ԶԸ՚ՐԻԻՆ Որդւոյն Աստուծոյ. օրհնեցէք ը՚նա հոգևոր երգով.

Դ՝ ոչ՝ էալ՝ ոչ՝ ըշէ՝ զվ՝ ոգ՝ ոյ՚։ Ե՝ Դողեր՛ն երգէն։

Դ. Ը՚ըցաք ՚ի բարութեանց քոց Տէր. Ճաշակելով ԶՄԱՐՄԻՆ քո և ԶԸ՚ՐԻԻՆ. փառք ՚ի բարձունս կերակրողիդ ըզըմեզ։ Ո՛ր հանապազ կերակրես ըզմեզ, առաքեա ՚ի մեզ ըզհոգևոր քո զօրհնութիւն. փառք ՚ի բարձունս կերակրողիդ ըզըմեզ։

Ե՝ Սրբո՝ ն՝ ոչ՝ ոչ՚։

Ս. Ը՚ու և ես խաղաղութեան զՏէր աղաչեսցո՛ւք։ Ը՚ու և ես հաւատով ընկալեալք յԱստուածային. սուրբ երկնային անմահ անարատ և անապական խորհրդոյս. զՏեառնէ գոհացարուք։

Դ. Գոհանամք ըզքէն Տէր. որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քոյ։ Ռաշխելով ԶՄԱՐՄԻՆԴ և ԶԸ՚ՐԻԻՆԴ

'ի փրկութիւն աշխարհի. և կեանք անձանց մերոց։

Յոկ ասպանօր Դպիրքն եղանէին զաղջ խորհրդո�րս, զինչև զքահանայն կարարէցէ զկրկ Աղօթիցն։

Եւ 'է Վերջ Տաղին՝ զորդեն զվարդապետն յեռս, Սարկաւագն ասէ։

Ս. Օրհնեա՛ Տէր։
Ք. Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն"։
Դ. Լցիցի անուն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև յաւիտեան։ երէց՝ հրէշտակ։
Ք. Կատարումն օրինաց և մարգա"։
Ս. Ալէլուիա Օ'րթի։
Ք. Խաղաղութիւն ամենեցուն։
Ս. Եւ ընդ հոգւոյդ քում։
Դ. Երկիւղածութեամբ լուարուք։
Ք. Սրբոյ Աւետարանիս ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԻՍՏՈՍԻ որ ըստ Յովհաննու։
Դ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Ս. Պռօսխու�։
Դ. Լսէ Աստուած։

Ի Հօրէ լուսոյ։

Ի Սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Աստուած. և Աստուած էր Բանն։

կամ

Յետ յարութեան Տեառն մերոյ
ՅԻՍՈՒՍԻ ՎԱՐԻՍՏՈՍԻ։

Եւ իբրև հաշեցին, ասէ ցՍիմոնն Եռ։

Ս. Սուրբ Աւետարանաւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ փրկեսցէ զմեզ 'ի մեղաց, և կեցուսցէ զնորհիւ ողորմութեան իւրոյ։ Եւ մենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա՛։

Ք. Պահպանիչ և յոյս հաւատացելոց։

Ս. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։

Ք. Օրհնեալք եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ. Ամէն։

Եւ 'է Էաղիէն ընդ խորս առ ժողովուրդն՝ Դպիրքն երգէն զՍաղմոս զայս։

Ի Տէր պարծեսցի անձն իմ. լուիցեն հեզք, և ուրախ եղիցին։

Մեծ արարէք զՏէր ինձ՝, և բարձր արասցո՛ւք զանուն նորա 'ի միասին։

Խնդրեցի 'ի Տեառնէ և լուաւ ինձ. յամենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս։

Մատիք առ Տէր՝ և առէք զլոյս, և երեսք ձեր մի ամաչեսցեն։

Այս աղքատ կարդաց առ Տէր, և Տէր լուաւ սմա. յամենայն նեղութենէ սորա փրկեաց զսա։

Բանակք հրեշտակաց Տեառն շուրջ են զերկիւղածովք իւրովք. և պահեն զնոսա։

Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր. երանելի է այր որ յուսայ 'ի նա։

Երկերուք 'ի Տեառնէ ամենայն սուրբք նորա. զի ոչինչ է պակասութիւն երկիւղածաց նորա։

Մեծամեծք աղքատացան և քաղցեան. բայց ոչք խընդրեն զՏէր, մի պակասեսցի 'ի նոցանէ ամենայն բարութիւն։

Եկայք որդեակ և իմ լուարուք ինձ. և զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ։

Վ՛ի է մարդ՝ որ կամի զկեանս, սիրէ զաւուրս իւր տեսանել 'ի բարութեան։

Լքեցո զլեզուս քո 'ի չարութենէ. և շրթունք քո մի խօսեսցի զշնեղութիւն։

ԱՄԱՐՏ

2954

2000

<< Ազգային գրադարան

NL0029833

2862